ԴՐԱԿԱՆ ԷՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ

ՈՒԺԸ

Ո՛չ մի սահման: Ո՛չ մի սահմանափակում:

ՌԱՍԵԼ ՊԼԻԼԱՐ

ԴՐԱԿԱՆ
ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՈՒԺԸ

Ո՛չ մի սահման: Ո՛չ մի սահմանափակում:

ՌԱՍԵԼ ՊԼԻԼԱՐ

ԴՐԱԿԱՆ ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՈՒԺԸ

Հրատարակված է «Ցանք և հունձք» ծառայության կողմից
Հեղինակային իրավունքները՝ @ 2006,
«Ցանք և հունձք» ծառայություն

Seedtime and Harvest Ministries Inc.
Post Office Box 270635,
San Diego, CA 92198-2635
(858) 576-1622
U.S.A.

Բոլոր իրավունքները պաշտպանված են:
Այս գրքի տեքստի ամբողջական կամ մասնակի
վերարտադրումը՝ առանց «Ցանք և հունձք» ծառայության
նախապես տրված անմիջական գրավոր համաձայնության,
անթույլատրելի է և անօրինական՝ ըստ 1976 թվականի
Ամերիկայի Միացյալ Նահանգների «Հեղինակային
իրավունքների մասին» օրենքի:

Կազմի ձևավորումը՝ Շոն Սթարմ,
www.sturmediadesign.com

Եթե չկան այլ նշումներ, բոլոր աստվածաշնչյան
մեջբերումները Աստվածաշունչ մատյան
«Արարատ» թարգմանությունից են (1869թ.):
Գրքում որոշ աստվածաշնչյան մեջբերումներ բառացիորեն
թարգմանված են Աստվածաշնչի «Նյու Քինգ Ջեյմս»
անգլերեն թարգմանությունից (1982թ.):

Թարգմանված է անգլերենից, 2017թ.

Բովանդակություն

Ներածություն.....7

Գլուխ Առաջին. Դրական երևակայության ուժը.....9

Գլուխ Երկրորդ. Գործադրե՛ք ձեր երևակայությունը 18

Գլուխ Երրորդ. Երևակայության ուժը 31

Գլուխ Չորրորդ. Գործադրե՛ք ձեր
երևակայությունը ձե՛զ համար.....41

Ընծայական ուղերձ

Բոլոր նրանց, ովքեր երևակայել են, բայց չեն տեսել իրենց երազանքի կամ սպասման իրականացումը. մի՛ հանձնվեք:

Ամեն ինչ ունի իր ժամանակը: Քաջալերվե՛ք, որովհետև ձեր հունձքը մոտ է:

Կարծիքներ.

Որոշ թիմեր խաղում են մասնակցելու համար, բայց չեմպիոնները խաղում են հաղթելու ակնկալիքով: Կարդալով «Դրական երևակայության ուժը» գիրքը՝ դուք կստանաք բարձրագույն լիգայի մոտիվացիա, տեղեկություն և ոգեշնչում: Ռասել Պլիլարը գիտի, թե ինչ է ասում: Նա և կինը՝ Բարբարան, Աստծո առաջնորդությամբ կառուցել են «Ցանք և հունձք» անվանումով մի ժամանակակից և առաջադեմ եկեղեցի Կալիֆոռնիա նահանգի Սան Դիեգո քաղաքում: Թույլ տվեք Ռասին՝ առաջնորդել ձեզ դրական երևակայության ուժի և անձնական հաղթանակի ճանապարհով:

Վիլյամ Վ. Քրաուչ,
Նախագահ,

«Վան Քրաուչ Քոմյունիքեյշնս»

Սպասման մթնոլորտը՝ բերրի հող է հրաշքի համար: Հովիվ Ռաս Պլիլարի գիրքը՝ դրական երևակայության ուժի մասին, կնորոգի ձեր սպասումները:

Ռիկ Գոդվին,
Ավագ հովիվ,
«Արծվաբույն» եկեղեցի

Ներածություն

Երևակայությունը մտքի համար նույնն է, ինչ շնչառությունը՝ մարմնի համար: Առանց *երևակայության՝* մենք դատապարտված կլինեինք ապրելու միմիայն մեր բնազդով: Մենք կշրջեինք առանց որևէ հագուստի, չէինք կարողանա կրակ վառել և շարունակ կերակուր կհայթայթեինք: Նույնիսկ այնքան հասկացողություն չէինք ունենա, որ հասարակ հյուղակներ պատրաստեինք ծառերի ճյուղերից՝ եղանակային պայմաններից պաշտպանվելու համար:

Թող որ այս գիրքը հաղորդի ձեզ նոր երևակայություն և հեռանկար՝ կյանքի համար, նորոգի ձեր հույսը և տա հստակ պատկերացում երազանքների, նպատակների և տեսիլքների մասին:

Գլուխ Առաջին

ԴՐԱԿԱՆ ԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՈՒԺԸ

Լեռնագնացը շարունակում է վեր բարձրանալ անհավատալի ցուրտ պայմաններում: Ցուրտն այնքա՛ն ուժգին և անտանելի է, որ թափանցում է մինչև նրա ոսկորները: Ճիգ գործադրելով դեպի հերթական ծերպը, որից կարելի է բռնվել, նա մղում է իրեն դեպի առաջ, դեպի վեր: Մթնոլորտը 6.000 մետր բարձրության վրա այնքան նոսր է, որ հազիվ է բավականացնում, բայց լեռնագնացը շարունակում է աննահանջ վեր բարձրանալ: Առջևում դեռ 2.800 մետր կա, որը նրա անցած կես ճանապարհից ընդամենը մի փոքր է պակաս. արդյո՞ք նա կհասնի գագաթին:

Սըր Էդմունդ Հիլարին՝ Նոր Զելանդիայից, առաջին մարդն էր, ով բարձրացավ Էվերեստ սարի գագաթը: 1953 թվականի մայիսի 29-ին նա իր ուղեկցորդի հետ հասավ աշխարհի ամենաբարձր կետին, որը 8848 մետր բարձրություն ունի ծովի մակարդակից: Երբ Սըր Հիլարիին հարցրին, թե ինչո՞ւ նա մագլցեց Էվերեստը, նա պատասխանեց. «Քանի որ այն այդտեղ է»: Նա մասնակցեց այդ արշավին, քանի որ ակնկալում էր հասնել սարի գագաթին:

Երևակայություն՝ ձգտման վառելիքը

Կյանքը լի է երևակայությամբ: Մենք պատկերացնում ենք, թե ինչպես է արևը ծագելու: Մենք սպասում ենք, որ հերթական անգամ շունչ ենք քաշելու: Մենք ակնկալում ենք, որ աճ և զարգացում ենք ունենալու:

Դրական երևակայությունը մղում է մեզ առաջ՝ դեպի մեր երազանքները և նպատակները, իսկ բացասական երևակայությունը կաթվածահար է անում՝ անգործության մատնելով: Կյանքում կա մի սկզբունք, որը բոլորս, վաղ թե ուշ, հասկանում ենք.

Դուք ստանում եք այն, ինչ ակնկալում եք՝ թե՛ լավը, թե՛ վատը:

Սպասում և ակնկալիք

Եկեղեցիներն աճում են՝ բարի բաների սպասելով: Դրանք աճում են, քանի որ ակնկալում են, որ Աստված կգործի մարդկանց կյանքերում և սրտերում, և կձգի նրանց դեպի Իրեն: Կարճ ասած՝ եկեղեցիներն աճում են, քանի որ բարի բաների են սպասում:

Իսկ դո՞ւք: Դուք ունե՞ք դրական երևակայություն: Դուք ունե՞ք դրական ակնկալիք ձեր ապագայի համար:

Դուք ապրո՞ւմ եք՝ լավ բաների սպասելով: Դուք ունե՞ք դրական ակնկալիք ձեր ապագայի վերաբերյալ: Մարդիկ սպասում են, որ լավ նվերներ կստանան Սուրբ ծննդյան տոներին, բայց երբեմն մեր սպասածի փոխարեն մեզ մի անհեթեթ փողկապ են նվիրում: Այնուամենայնիվ, մենք պետք է դրական սպասում ունենանք ամեն ինչում:

Սպասումը նայում է առաջ՝ դեպի ապագան: Երբ դուք լցված եք ակնկալիքով, դուք սպասում եք, որ ինչ-որ բան տեղի կունե-

նա: Այսպիսով, սպասումները և ակնկալիքները հատուկ են առաջադեմ մտածելակերպ ունեցող մարդկանց:

> «*Որովհետև նա այնպիսին է, ինչպես որ մտածում է իր սրտում*» (Առակաց 23.7, NKJV):

Դուք կլինեք այնպիսին, ինչպես որ մտածում եք ձեր սրտում: Հիսուսն ասաց. «*Որովհետև սրտի ավելացածից կխոսի բերանը*» (Մատթեոս 12.34): Եթե դուք ձեզ անարժեք համարեք, ձեր սպասումը ձեզնից՝ կլինի հենց այդպիսին: Եթե մտածեք, որ ոչնչի չեք կարող հասնել, դուք, հավանաբար, ճիշտ դուրս կգաք:

Գեդեոնն անարժեք էր համարում իրեն: Նա ասաց Տիրոջ հրեշտակին, որ իր ցեղն ամենափոքրն է Իսրայելի բոլոր ցեղերից: Ավելին՝ Գեդեոնն իր հոր ազգատոհմը համարում էր ամենափոքրը՝ իր ցեղի բոլոր ազգատոհմերից, իսկ իրեն՝ իր հոր տան ամենափոքրը: Այս մարդը հավատում էր իր սրտում, որ կունենար աննշան ազդեցություն, կամ՝ ոչ մի ազդեցություն Իսրայելի պատմության վրա: Դրականի փոխարեն Նա ուներ բացասական սպասում թե՛ իրենից, թե՛ Աստծուց:

Աստված հանդիպում է ձեզ այնտեղ, որտեղ դուք գտնվում եք

Աստծո պատկերացումը Գեդեոնի մասին՝ դրական էր: Գեդեոնը չէր հասկանում, որ Աստված չէր տեսնում իրեն այնպես, ինչպես ինքը:

- Աստված սպասում էր, որ Գեդեոնը զորավոր և խիզախ տղամարդ լիներ:
- Աստված սպասում էր, որ Գեդեոնը խրախուսվեր և քայլ աներ՝ դիմելով այնպիսի ռիսկերի, որոնցից մյուսները խուսափում էին:

- Աստված սպասում էր, որ Գեդեոնը դառնար այնպիսի առաջնորդ, ով կփրկեր Իսրայելը:

> *«Եվ Տիրոջ հրեշտակը եկավ և Աբիեզերյան Հովասի բևեկնու տակ նստեց, որ Եփրայի մեջ էր, և նրա որդի Գեդեոնը կալում ցորեն էր ծեծում՝ մադիանացիների երեսից փախցնելու համար: Եվ Տիրոջ հրեշտակը նրան երևաց և ասաց. «Ո՛վ հզոր զորավոր, Տերը քեզ հետ»»* (Դատավորաց 6.11,12):

Գեդեոնը «հզոր զորավոր» չէր համարում իրեն: Հաշվի առնելով Գեդեոնի կարծիքն իր մասին՝ ես մտածում եմ, որ միգուցե նա շրջվեց՝ տեսնելու համար, թե ում հետ է Տերը խոսում:

Ինչպես և Գեդեոնը, հաճախ մենք չենք տեսնում մեզ Աստծո կոչման համեմատ: Այնուամենայնիվ, Աստված չի սխալվում: Աստված տեսավ Գեդեոնի մեջ այն, ինչ տեսնում է բոլորիս մեջ՝ ***ներում:*** Աստված սպասում էր, որ Գեդեոնը հաղթող լիներ: Աստծո դրական սպասումը բարձրացրեց Գեդեոնին նոր մակարդակի վրա այնտեղից, որտեղ նա գտնվում էր:

Այնուամենայնիվ, Գեդեոնը չէր համոզվում և վիճարկում էր Աստծո խոսքերը:

Նա հարցրեց. «Եթե Տերը մեզ հետ է, ինչո՞ւ ենք մենք հայտնվել մադիանացիների ծանր ձեռքի տակ: Ինչո՞ւ է Տերը թողել մեզ»:

Աստված, որպես կանոն, չի պատասխանում նման հարցերի, և այս դեպքը բացառություն չէր: Մենք տալիս ենք նույն հարցերը.

- Տե՛ր, ինչո՞ւ Դու թույլ տվեցիր, որ այսպիսի բան տեղի ունենար ինձ հետ:

- Տե՛ր, ինչո՞ւ ես պետք է անցնեմ այս իրավիճակով: Չե՞ս կարող պարզապես շտկել այն:
- Տե՛ր, ինչո՞ւ է այս աշխարհը, այս ազգը, այս քաղաքը կամ այս բնակավայրը այսպիսի խառնաշփոթ վիճակում: Ինչո՞ւ Դու թույլ տվեցիր, որ ամեն ինչ այսքան հեռու գնա:

Գեդեոնը կենտրոնացած էր բացասականի վրա: Տերն ասաց Գեդեոնին նույնը, ինչ ասում է մեզ. «Գնա՛ քո ուժով և զորությամբ և փրկի՛ր քո ժողովրդին»:

Աստված բարձրացնում է ձեր սպասման մակարդակը

Աստված ակնկալում էր, որ իրեն տկար և անզոր համարող անձնավորությունը փրկեր Իսրայելը, բայց նման հրամանն Աստծուց՝ վերջին բանն էր, ինչին սպասում էր Գեդեոնը: Նա կգոհանար, եթե պարզապես ստանար իր հարցերի պատասխանները, բայց փոխարենը նա ստացավ հրաման՝ հարձակվելու հզոր և կատաղի թշնամու վրա:

Աստված *օգնեց* Գեդեոնին հասկանալ, որ իր ներսում կար շատ ավելի մեծ ներուժ, քան ինքը երբևէ պատկերացրել էր:

Աստված *սովորեցրեց* Գեդեոնին, որ զորությունը գտնվում է *դրական երևակայության* մեջ, և որ Գեդեոնը կարող էր շատ ավելին սպասել իրենից և Աստծուց:

Աստված *խոստացավ* Գեդեոնին, որ կլինի նրա կողքին՝ թշնամու հետ մարտնչելու ժամանակ:

Աստված *բարձրացրեց* Գեդեոնի սպասման մակարդակը շատ ավելի վեր նրա ներկա հանգամանքներից՝ ուղղելով նրա սպասումն անմիջապես Իրեն: Այսպիսով՝

- Աստված ցանկանում է օգնել ձեզ հենց այսօր, որ հասկանաք ձեր ներուժը:
- Աստված սովորեցնում է ձեզ հենց այսօր, որ *դրական երևակայության* մեջ զորություն կա:
- Աստված խոստանում է, որ կլինի ձեզ հետ՝ անկախ այն բանից, թե կյանքում ինչի կբախվեք:
- Աստված բարձրացնում է ձեր սպասման մակարդակը շատ ավելի վեր ձեր ներկա հանգամանքներից:

Երբ թվում է՝ մեզ շրջապատող հանգամանքները կոտրում են մեզ, պետք է հիշենք, որ մեր կյանքում կա Աստված, Ում կարելի է վստահել, քանի որ Նա վեր է ամեն ինչից: Աստծո համար անկարելի ոչինչ չկա: Այնպես որ, մեր գործը՝ պարզապես Նրան վստահելն է:

Դուք պետք է բարձրացնեք ձեր սպասման և վճռականության մակարդակը: Այո՛, սպասո՛ւմ ունեցեք, որ լավագույնս կվարվեք ցանկացած իրավիճակում:

Ոչինչ մի՛ սկսեք պարտվածի դիրքորոշմամբ: Սկսե՛ք Տիրոջ զորությամբ և ավարտե՛ք նույն կերպով: *Աստված կանի մեզ համար այն ամենը, ինչին կհավատանք:*

Դուք կարող եք փոխե՛լ ձեր աշխարհը

Պատմության ընթացքում Աստված կանչել է առանձին անհատների՝ նշանակալի փոփոխություններ իրականացնելու համար: Աստված գործածում է մարդկանց, որ կատարի Իր կամքը այս՝ մեղքով քայքայված և ապստամբ աշխարհում, և դուք այդ մարդկանցից մեկն եք: Այն մարդկանց մեծ մասը, ովքեր զորավոր կերպով գործածվել են Աստծո կողմից, այդպիսին չեն ծնվել:

Աստված է հասցրել նրանց այն դիրքին, որը նրանք ունեցել են, իսկ հետո զորացրել է, որ մարտահրավեր նետեն այս աշխարհին և փոխեն այն: Սա վերաբերում է նաև ձեզ:

> «*Եվ հաստատ համոզված եմ սրանում, թե Նա, Ով ձեզանում սկսեց այս բարի գործը, կկատարի էլ մինչև Հիսուս Քրիստոսի օրը*» (Փիլիպեցիների 1.6):

Իսկ հիմա հարցրե՛ք ձեզ հետևյալը.

- Ի՞նչ բարի գործ է Աստված սկսել ինձանում:
- Ի՞նչ է Աստված բորբոքել իմ սրտում, որը դրսևորվելու դեպքում, կփոխի ինձ շրջապատող աշխարհը:
- Արդյո՞ք Նա տեսիլք է տվել ձեզ այն մասին, թե ինչպես ամեն ինչ կարող է փոխվել, և թե ինչ դուք կարող եք անել՝ այդ փոփոխությունը կյանքի կոչելու համար:

Աստված *կբարձրացնի* ձեր սպասման մակարդակը: Փոխարենը թույլ տալու, որ այս աշխարհը խեղդի ձեր հույսերը և երազանքները՝ թո՛ւյլ տվեք, որ Աստված բարձրացնի ձեր սպասման մակարդակը: Սպասումը՝ Հոգու աշխատանքն է ձեր ներսում: Աստված սկսում է գործել ձեր ներսում, և ձեզանում ներքին փոփոխություններ են տեղի ունենում: Ձեր բացասական պատկերացումը սեփական անձի մասին՝ վերածվում է նոր, դրական սպասման: Աստծո տված նոր սպասումը կտա բարի պտուղ, այսինքն՝ այնպիսի գործեր, որոնք կհաղթահարեն ցանկացած հանգամանք: Դուք կբարձրանաք ձեր հանգամանքներից՝ դրանց ենթարկվելու փոխարեն:

Հաճախ ձեր ներքին սպասումն սկիզբ է առնում հույսից: Հույսը ծնում է սպասում, իսկ սպասումը գործողության է մղում: Հույսն առանց գործողության՝ դառնում է անիրական պատրանք: Գործողությունն առանց սպասման՝ դատապարտված է ձախողման:

Աստվածային սպասումը համարձակ է դարձնում ձեզ և՛ մտքով, և՛ գործով: Հիսուսը **համարձակ** էր, երբ հրամայեց Ղազարոսին դուրս գալ գերեզմանից: Հիսուսը համարձակ սպասում էր, որ նա դուրս կգար, և... Ղազարոսը հարությո՛ւն առավ:

Համարձակ սպասումը դրդում է համարձակ գործերի: Համարձակ գործերն սպասում են հրաշքների և ծնում են հրաշքներ: Մեր Աստված՝ գործի Աստված է, և Նրա գործերը բխում են **համարձակ սպասումից**:

> «*Եվ հետևյալ օրը եղավ, որ նրանց իշխանները և ծերերը և դպիրները ժողովվեցին Երուսաղեմում: Եվ Աննա քահանայապետը և Կայիափան, Հովհաննեսը և Աղեքսանդրոսը, և նրանք, որ քահանայական ցեղից էին: Եվ նրանց կանգնեցնելով մեջտեղը՝ հարցնում էին թե՝ ի՞նչ զորությամբ կամ ո՞ւմ անունով արիք դուք այս: Այն ժամանակ Պետրոսը՝ Սուրբ Հոգով լցված, նրանց ասաց. «Ո՛վ ժողովրդի իշխաններ և Իսրայելի ծերեր...»*» (Գործք 4.5-8):

Որպեսզի արդյունավետ կերպով գործածվեք Աստծո կողմից, «*լցվե՛ք Հոգով*» (տե՛ս Եփես. 5.18): Պետրոսն անզոր էր՝ առանց Սուրբ Հոգու լեցունության: Հիշե՛ք, որ ընդամենը շաբաթներ առաջ նա ուրացավ, որ ճանաչում էր Հիսուսին, իսկ այժմ նա համարձակ հռչակում էր հարություն առած Տիրոջը: Սուրբ Հոգին զորացնում է մեզ, որ խիզախությամբ խոսենք և գործենք Հիսուսի անունով:

Դուք պետք է որոշում կայացնեք. կա՛մ թավալվել ձեր ցածր ինքնագնահատականի ցեխի մեջ և գոյատևել այն աղբի մեջ, որն այս աշխարհը նետում է ձեզ վրա, կա՛մ բարձրանալ դեպի այն ԴՐԱԿԱՆ ՍՊԱՍՈՒՄԸ, որն Աստված պատրաստել է ձեզ համար: Որտե՞ղ եք ցանկանում ապրել՝ խոզանոցո՞ւմ, թե՞ Աստծո սարի գագաթին:

ԴՐԱԿԱՆ սպասումը համարձակ հավատք է ծնում

Հիսուսի մեծ սպասումը և համարձակ հավատքը դուրս բերեցին Ղազարոսին գերեզմանից: Հիսուսն ասաց. «Ղազարո՛ս, դո՛ւրս եկ», և նա ելավ գերեզմանից: Աստված կանչել է նաև ձեզ՝ խոսելու Իր Խոսքը և դուրս բերելու «Ղազարոսին» գերեզմանից:

- Ի՞նչ հրաշքներ են սպասում ձեր համարձակ հավատքին:
- Աստծո զորության ինչպիսի՞ դրսևորումներ են սպասում ձեր հնազանդությանը:
- Ինչպե՞ս դուք կվարվեք:

Հավատքի քա՛յլ արեք և համոզվա՛ծ եղեք, որ Աստված կանի այն, ինչ ասել է: Խաղաքարտին է դրված ոչ թե ձե՛ր համբավը, այլ՝ Աստծունը: Դուք վախենալու ոչինչ չունեք, քանի որ թողել եք ձեր վախը խաչի մոտ: Աստված Ի՛նքն է պատասխանատվություն ստանձնում, երբ դուք հնազանդվում եք Նրա Խոսքին: **Համարձա՛կ եղեք: Ուժե՛ղ եղեք: Ունեցե՛ք ԴՐԱԿԱՆ սպասում: Աստված այդպիսին է**:

Գլուխ Երկրորդ

ԳՈՐԾԱԴՐԵ՛Ք ՁԵՐ ԵՐԵԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

«Ես ակնկալում եմ, որ շատ ուժեր կունենամ, երբ հասնեմ այս սարի գագաթը, - ասաց լեռնագնացը: - Ինձ օգնություն պետք չի լինի՝ այդտեղից իջնելու համար, քանի որ ես դեռ մեծ եռանդ և ուժ կունենամ»: Այդ մարդն իր խոսքի տերն էր, և էվերեստի գագաթը բարեհաջող կերպով բարձրանալուց հետո, իր ոտքով վերադարձավ արշավի բազային ճամբարը:

Այն հարցին, թե վախենո՞ւմ էր ձախողումից, նա պատասխանեց. «Ո՛չ: Ես չէի բարձրանա նույնիսկ ամենաթեթև լանջով, եթե վախենայի ձախողումից: Ձախողումը փորձում է հարձակվել և իշխանություն ստանձնել ինձ վրա միայն իմ մտքում: Ես հաջողության եմ հասնում իմ մտքում, մինչև որ կփորձեմ հաջողության հասնել իմ գործերում»:

Դրական դավանություն

Դրական ՄԵԾ սպասումն ազդեցիկ մթնոլորտ է ստեղծում մեր կյանքում: Դրական դավանությունը՝ դրական մեծ սպասման

հետ մեկտեղ, տալիս է արտասովոր արդյունքներ և հաղթական կյանք:

«*Պինդ բռնենք հույսի դավանությունը՝ անսայթաք*» (Եբրայեցիների 10.23): Հռչակումը և դավանությունը հիմնականում նույնն են: Երբ հռչակում եք, դուք դավանում եք այն, ինչին հավատում եք: Դավանելով այն, ինչին հավատում եք՝ դուք պայմաններ եք ստեղծում ձեր հավատքի սպասման համար: Ձեր հավատքի սպասումն, իհարկե, արմատացած է Աստծո թագավորության մեջ: Սուրբ Հոգին արթնացնում է ձեր սիրտը և տանում է դեպի հաջորդ մակարդակը՝ սովորեցնելով ձեզ, թե ինչի համար աղոթեք և՝ ինչի սպասեք:

Գոյություն ունեն կարևոր հարցեր, որոնք մենք պետք է տանք մեզ.

- Ինչո՞ւ ես հավատք ունեմ:
- Ինչի՞ եմ ես սպասում իմ հավատքով:
- Ի՞նչ եմ ես անում իմ հավատքով:

Դուք պետք է հետևողականորեն դավանեք այն, ինչին սպասում է ձեր հավատքը: Դուք ապրում եք այս աշխարհում, և ոչ այն ամենը, ինչը դուք կտեսնեք և կլսեք, կզորացնի ձեր հավատքը կամ սպասումը: Իրականում, ձեր շուրջը տեղի ունեցող գրեթե բոլոր իրադարձությունները կտանեն ձեզ պարտության և հուսահատության, եթե թույլ տաք, որ դրանք ազդեն ձեր մտքի վրա:

Երբ դուք մշտապես դավանում եք, թե ինչին եք հավատում և Ում եք հավատում, թշնամու կրակոտ նետերը հանգչում են՝ մինչև ձեզ հասնելը: Հիսուսի հավատքը և սպասումն անշարժ էին՝ անկախ այն ամենից, ինչ կատարվում էր Նրա շուրջը: Միակ բանը, որը շարժում էր Նրա սիրտը, գթասրտությունն էր, բայց

գթասրտություն զգալով՝ Նա չէր հիասթափվում, այլ ծառայում էր մարդկանց:

Հիսուսը չէր ապրում Իր զգացմունքներով: Նա ապրում էր՝ ունենալով սպասում և դավանելով այն, ինչ Հայրն անում էր: «*Եվ Իմ անձից ոչինչ չեմ անում, այլ՝ ինչպես Իմ Հայրը սովորեցրեց ինձ, այն եմ խոսում*» (Հովհաննես 8.28): Երբ այդպես ապրեք, Աստծո զորությունը կգործի ձեր կյանքի և ձեր խոսքերի միջոցով: Ձեր դավանության խոսքը կարտահայտի Աստծո զորությունը, որը կարող է կատարել այն, ինչ դուք ասում եք:

Դավանե՛ք այն, ինչ սպասում եք

Երբ դուք դավանում եք այն, ինչի հանդեպ սպասում ունեք, Երկնքի զորությունն սկսում է գործել՝ ձեր խոսքերը կատարելու համար:

> *«Որովհետև՝ ինչպես որ իջնում է անձրևը և ձյունը երկնքից և ետ չի դառնում այնտեղ, այլ ոռոգում է երկիրը և նրան արգասավոր անում և բողբոջեցնում նրան և տալիս է սերմ սերմնացանին և հաց՝ ուտողին, այնպես էլ պիտի լինի Իմ բերանից դուրս եկած Խոսքը. այն պիտի պարապ ետ չդառնա Ինձ մոտ, այլ կատարի Իմ ուզածը, և հաջողվի նրանում, ինչի համար, որ Ես նրան ուղարկեցի»* (Եսայի 55.10,11):

Երբ Աստված խոսում է, Նա արդյունքների է սպասում. ուրեմն, երբ դուք խոսում եք, դուք նույնպես պետք է արդյունքների սպասեք: Ձեր լեզուն մեծ զորություն ունի, որը կյանքի կկոչի ձեր ասած խոսքերը: Այդ իսկ պատճառով, ձեր կյանքում ահռելի պատասխանատվություն կա. դուք պետք է լինեք Աստծո կամքի մեջ ձեր ամեն մի խոսքով և գործով: Դուք կարող եք արդյունքներ ակնկալել, քանի որ ձեր ներսում բնակվում է Աստծո զորությու-

նը, որը կյանքի է կոչում դեռևս գոյություն չունեցող բաները: Այդ իսկ պատճառով, խոսե՛ք այն, ինչ սպասում եք Աստծուց:

Երբ շփվում եք անհավատ մարդկանց հետ, թույլ մի՛ տվեք, որ նրանց բացասական վերաբերմունքը զրկի ձեզ Աստծո ծրագրերից: Կասկածամիտ և դժգոհ մարդիկ կչարախոսեն ձեզ մոտ՝ ձեզ անհավատության հասցնելով, եթե թույլ տաք: Հասկացե՛ք, որ սա ներքին աշխատանք է. այն սկիզբ է առնում ձեր ներսում և ի հայտ է գալիս՝ լռեցնելով ձեզ շրջապատող պարտության և հուսահատության ձայները: Ձեր ուրախության հիմքը՝ Աստծո մասին այն գիտելիքն է, որն ունեք ձեր մտքում, և Նրա մասին այն հայտնությունն է, որն ունեք ձեր հոգում:

Ուրախությունը՝ ներսում

Սպասումը ներքին է, ոչ թե արտաքին: Դուք չպետք է կորցնեք ձեր սպասումը արտաքին հանգամանքների պատճառով: Փոխարենը՝ սնվե՛ք ձեր ներսի պաշարներից, որպեսզի դրական և ՄԵԾ սպասում ունենաք: Երջանկությունը հիմնված է արտաքին հանգամանքների վրա, իսկ ուրախությունը բխում է ձեր ներսից և Աստծո հետ ձեր փոխհարաբերություններից: *«Իրիկունը լաց է գալիս, իսկ առավոտը՝ ցնծություն»* (Սաղմոս 30.5բ): Միայն Աստված կարող է լիովին սրբել ձեր արցունքները և տալ ձեզ Քրիստոսի ուրախությունը:

Սուրբ Հոգին օրհնություն է բերում ձեզ՝ լցնելով ձեզ վրա «ուրախության յուղը» և առաջնորդելով ձեզ դեպի նոր կյանք: Դուք ազատ եք՝ լինելու այնպիսին, ինչպիսին Աստված կանչել է ձեզ: Այլևս կարիք չկա, որ թաքնվեք ինչ-որ մեկի ետևում: Վախն այլևս չի իշխի ձեզ վրա: Դուք այլևս չեք վարանի Աստծուն հավատալու հարցում: Դուք այլևս չեք ապրի պարտության մեջ, քանի որ ձեր ուրախությունը բխում է ձեր ներսից:

Սպասում և համբերություն

Ճշմարիտ աստվածաշնչյան սպասումն ուղեկցվում է համբերությամբ: Դուք կարող եք կանգուն մնալ այն խոստման շնորհիվ, որն Աստված տվել է ձեզ: *«Արդ հաստատ կանգնեք՝ ձեր մեջքերը ճշմարտությամբ գոտևորված»* (Եփեսացիների 6.14): Դուք կարող եք կանգուն մնալ, քանի որ գիտեք ճշմարտությունը: Հիսուսն ասաց. «*Եվ ճշմարտությունը կճանաչեք, և ճշմարտությունը կազատի ձեզ»* (Հովհաննես 8.32): Ազատությունը գալիս է ճշմարտությունը ճանաչելուց: Երբ ճանաչեք ճշմարտությունը, դուք կունենաք ազատություն՝ այնպիսին, որում վախ չկա:

- Մեծ սպասումն այսօր՝ հույս է տալիս ձեզ վաղվա համար:
- Մեծ սպասումն այսօր՝ նպատակ է տալիս ձեզ վաղվա համար:
- Մեծ սպասումն այսօր՝ ազատություն է տալիս է ձեզ, որ փոխեք ձեր ապագան ձևավորող դեպքերի ընթացքը:
- Մեծ սպասումն այսօր՝ ուժ է տալիս ձեզ, որ լինեք այնպիսին, ինչպիսին Աստված կանչել է ձեզ՝ վաղվա համար:

Աստված՝ ձեր աղբյուրն է:

- Ձեր աշխատանքը՝ ձեր աղբյուրը չէ:
- Ձեր կողակիցը՝ ձեր աղբյուրը չէ:
- Ձեր ընտանիքը՝ ձեր աղբյուրը չէ:
- Ձեր ժառանգությունը՝ ձեր աղբյուրը չէ:
- Աստվա՛ծ է ձեր միակ աղբյուրը:

Աստված կարող է օգտագործել այս բաները՝ ձեզ օրհնելու համար, բայց դրանք ձեր աղբյուրը չեն: Քանի որ Աստված է ձեր աղբյուրը, դուք պետք է սպասում ունենաք ձեր ապագայի համար միայն Նրանից: *«Որովհետև Ես գիտեմ այն խորհուրդները, որ խորհում եմ ձեր մասին,- ասում է Տերը,- խաղաղութ-*

յան խորհուրդները, և ոչ թե չարության, որ ձեզ տամ ապագան և հույսը» (Երեմիա 29.11): Աստված մեծ բաներ է պատրաստել ձեզ համար: Աստված մեծ ծրագրեր ունի ձեզ համար: Սպասե՛ք, որ Աստված մեծ բաներ կանի ձեզ համար, քանի որ Նա արդեն խոստացել է:

Մենք կարող ենք սպասում ունենալ, որ Աստված կհաստատի Իր ասածը: Աստված հավատարիմ է, և Նա կանի այն, ինչ ասել է: Մնացե՛ք Խոսքի մեջ, մնացե՛ք աղոթքի մեջ, մնացե՛ք Աստծո կամքի մեջ: Աստված ասաց, որ այդպես կլինի. ուրեմն, այդպե՛ս էլ կլինի: Աստված միշտ կատարում է Իր ասածը: Ճշմարիտ աստվածաշնչյան սպասումն արմատացած է Աստծո Խոսքի և Նրա կամքի մեջ: Աստծո Խոսքը մարգարեական է՝ այն իմաստով, որ այն խոսում է ձեր կյանքի և ապագայի մասին: Համոզվա՛ծ եղեք, որ Աստված «*...կարող է առատությամբ անել ամեն բանից ավելի, քան որ խնդրում ենք և իմանում, այն զորության չափով, որ մեզանում ներգործում է»* (Եփեսացիների 3.20):

Վհատությունը՝ համարձակության բացակայությունն է: Դուք չունեք համարձակություն, քանի որ չեք հայտնաբերել ամեն ինչի աղբյուրը՝ Աստծուն: Ճշմարիտ համարձակությունն առաջանում է, երբ մարդը գիտի այն զորության աղբյուրը, որն առաջնորդում է իրեն: Եթե դուք առաջնորդվում եք միայն ձեր մեջ եղող մարդկային զորությամբ, ամեն քայլափոխին դուք բախվելու եք հուսալքության և հիասթափության: Միայն՝ երբ սնվեք տիեզերքի զորության աղբյուրից՝ Աստծուց, դուք կունենաք զորություն, խիզախություն և իշխանություն, որպեսզի հաղթող լինեք ձեր կյանքի ամեն իրավիճակում:

Դուք կանչված եք, որ հաղթող լինեք: Աստծո Խոսքն ասում է, որ դուք հաղթելու զորություն եք ստանում այն ժամանակ, երբ կանչում եք Աստծուն և առաջնորդվում եք Նրա Հոգով: Հայտնություն գրքի երկրորդ և երրորդ գլուխներում գրված են հաղթողնե-

րին ուղղված խոստումներ, որոնք ամփոփվում են Հայտնություն 21.7-ում գտնվող խոստմամբ. *«Ով որ հաղթի, ամենը կժառանգի, և Ես կլինեմ նրան Աստված, և նա կլինի Ինձ որդի»:* Աստված այնքա՛ն մեծ շեշտադրում է անում հաղթող լինելու վրա, որ Հիսուսի ուսմունքների մեծ մասը ձեր ամենօրյա իրավիճակները հաղթելու մասին է: *«Սրա համար ասում եմ ձեզ՝ հոգս մի՛ արեք ձեր կյանքի համար, թե ինչ պիտի ուտեք և ինչ պիտի խմեք, և ո՛չ ձեր մարմնի համար, թե ինչ պիտի հագնեք: Չէ՞ որ կյանքը ավելի է կերակուրից, և մարմինը՝ հագուստից»* (Մատթեոս 6.25):

Հուսացե՛ք Աստծուն: Սպասո՛ւմ ունեցեք Զորաց Տիրոջից: Այն ընթացքում, երբ դուք սովորում եք անձնատուր լինել Աստծուն, անհայտի վախը փոխարինվում է վստահությամբ, որ դուք ամեն ինչ կարող եք ձեզ զորացնող Քրիստոսով: Դուք պետք է հավատաք և վստահեք, որ Աստված ձեր կողմն է, որպեսզի քայլ անեք՝ ունենալով մեծ սպասում Աստծուց: Դուք պետք է համոզված լինեք, որ Նա կա, ինչպես գրված է Աստվածաշնչում, քանի որ դուք Նրա զավակն եք (տե՛ս Հովի. 1.12): Այն ճշմարտությունը, որ Աստված ձեզ հետ է, և ոչ թե՝ ձեր դեմ, հաստատված փաստ է: *«Ապա ի՞նչ ասենք այս բաների համար. եթե Աստված մեր կողմն է, ո՞վ է մեզ հակառակ»* (Հռոմեացիների 8.31):

Դուք պետք է ստանաք ձեր ուժն ու վստահությունն Աստծուց: Եթե դուք արմատացած չեք Նրանում, կթուլանաք, և ձեր սպասումը կտատանվի: *«Եթե դու թուլացար նեղության օրը, քո ուժը քիչ է»* (Առակաց 24.10, NKJV): Աստված շատ ավելի մեծ է, քան այն ամենը, ինչին դուք կարող եք բախվել: Նրա զորությունն ավելին է, քան այն ամենը, ինչը կարող է դուրս գալ ձեր դեմ: Թո՛ւյլ տվեք, որ այս կարևոր ճշմարտությունը խորապես հաստատվի ձեր հոգում. **Աստված ուզում է, որ դուք հաջողության հասնեք, ոչ թե ձախողվեք**:

Աստվածային երևակայություն

«Որովհետև նա (մարդն) այնպիսին է, ինչպես որ մտածում է իր սրտում» (Առակաց 23.7, NKJV): Դուք պետք է պատասխանեք՝ ձեր մասին հետևյալ կարևոր հարցերին.

- Ինչպե՞ս եք դիտարկում ձեզ:
- Դուք համարում եք ձեզ հաղթո՞ղ, թե՞ պարտվող:
- Դուք զո՞հ եք, թե՞ հաղթող:

Աստվածային երևակայությունը ոչ միայն օգնում է կառուցել ձեր ապագան, այլև՝ դիտարկել ինքներդ ձեզ որպես Աստծո ուժեղ և հաղթող զավակ: Դուք սկսում եք համագործակցել Աստծո հետ ձեր կյանքի կառուցման մեջ և չեք տատանվում ձեր շուրջը մոլեգնող հանգամանքներից: Դուք ապրում եք որպես հաղթող, ոչ թե՝ զոհ:

Ձեր կյանքում նեղություններ են գալու. դուք չեք կարող խուսափել դրանցից: Հաղթողն սպասում է նեղությանը, քանի որ նեղության միջոցով ավելի ուժեղ է դառնում: Դուք հաղթող եք, այնպես որ, մի՛ փախեք խնդիրներից. բախվե՛ք դրանց: Շատ քրիստոնյաներ աղոթում են, որ Աստված ազատի իրենց բոլոր խնդիրներից, փոխարենը խնդրեն Նրան՝ ցույց տալ, թե ինչպես հաղթահարել դրանք: Խնդիրներին և նեղություններին բախվելը զորացնում է ձեր հոգին և բարձրացնում է ձեր հավատքը: Դուք սկսում եք հասկանալ, որ Աստված իրականում կարող է և ցանկանում է օգնել, որ հաղթահարեք ձեզ ճնշող բոլոր խնդիրները:

Նեղություններին բախվելը կառուցում է ձեր վստահությունը, և դրանով իսկ՝ ձեր ինքնագնահատականը: Այնուամենայնիվ, կարևոր է հասկանալ, որ ձեր ինքնագնահատականի հիմքը Քրիստոսն է, ոչ թե դուք: Երբ հասկանում եք, որ ձեր ուժը կախված չէ ձեր կարողություններից, այլ՝ Աստծուց, դուք սկսում եք ապրել ազատության մեջ:

Բացասական մտքերը պարտություն են բերում

Դուք այն եք, ինչ մտածում եք: Եթե ձեր մտքերը և սպասումները բացասական են, կարող եք սպասել բացասական արդյունքների: Դուք կստանաք այն, ինչ սպասում եք: Իսկ եթե ոչ մի սպասում չունեք, ոչինչ էլ չեք ստանա:

Եթե վատ արդյունքներ եք տեսնում ձեր երևակայության մեջ, դուք կձախողվեք և կպարտվեք: Կարևոր է, որ հասկանաք՝ ձեր մտքերն ազդում են ձեր կյանքի ամեն մի բնագավառի վրա: Դուք հնձում եք այն, ինչ ցանում եք: Եթե բացասական բաներ ցանեք, ձեր հունձքը նույնպես բացասական կլինի. դուք կապրեք պարտությամբ, քանի որ ավելի լավ բանի չեք էլ սպասի:

Նեեմիան հանդիպեց շատ խոչընդոտների՝ ձգտելով նորոգել Երուսաղեմի պարիսպները: Այնուամենայնիվ, նա հաղթահարեց մարդկանց տրտունջը՝ պատմելով քաղաքի պարիսպը վերակառուցելու տեսիլքը, որն Աստված տվել էր իրեն: Նա ուժեղ հավատք ուներ և համոզված էր, որ Աստված անելու էր այն ամենը, ինչ ասել էր. *«Եվ նրանց ասաց. «Գնացե՛ք, պարարտ բաներ կերե՛ք և անուշ բաներ խմե՛ք և բաժիններ ուղարկե՛ք պատրաստություն չունեցողին, որովհետև այս օրը սուրբ է մեր Տիրոջ համար: Եվ մի՛ տրտմեք, որովհետև Տիրոջ ուրախությունը ձեր զորությունն է»* (Նեեմիա 8.10):

Նեեմիան ցույց տվեց մարդկանց ուրախության և զորության միակ ճշմարիտ աղբյուրը: Միայն Աստված կարող է լինել ձեր Կենարար Աղբյուրը՝ ձեր բոլոր դժվար պահերին: Հենց որ դուք հասկանաք այս կարևոր ճշմարտությունը և համոզվեք սրանում, դուք չեք կարող դրական չլինել: Բացասական մտածելակերպը նույնիսկ մոտ չի գա ձեր մտքին՝ ձեր ներսում բնակվող Տիրոջ զորության շնորհիվ:

Երբ ճանաչեք Աստծուն՝ որպես ձեր ուրախության և զորության աղբյուրի, դուք ազատ և անկաշկանդ կդառնաք: Դուք կմոռանաք այն ամենը, ինչը ձեր ետևում է, և կկենտրոնանաք առջևում սպասվող բաների վրա: Սա ճշմարիտ աստվածաշնչյան ուրախություն է: Եթե վստահեք Աստծո խոստմանը այն մասին, որ Նա երբեք չի թողնի և չի լքի ձեզ, դուք ի զորու կլինեք հավատալու մեծ բաների:

Մեծ հավատք ունեցեք՝ մեծ բաների համար

Աստված շատ փոքր առաջադրանք չի տա ձեզ: Միգուցե մտածեք, որ ձեզ տրված առաջադրանքներից որևէ մեկը ցածր է ձեր կարողությունից, սակայն դա ձեր սրբացման ընթացքի մասն է: Դուք պետք է հաղթահարեք այդ միտքը և կատարեք այն, ինչի համար Աստված կանչել է ձեզ: Կա մեկ բան, որն Աստված դնում է ձեր սրտում՝ լայն մտածելու ցանկությունը:

Ձեր Աստված՝ ՄԵԾ Աստված է, Ով ՄԵԾ բաներ է անում: Դուք պետք է ճանաչեք Աստծուն, որպեսզի հասկանաք Նրա էության այս կողմը: Աստծո հանդեպ մեծ հավատք ունենալու համար պետք է լայն մտածելակերպ ունենաք: *Դուք չեք կարող նեղ մտածելակերպ ունենալ և ազդեցիկ հավատացյալ լինել*: Դուք պետք է լայն մտածեք՝ մեծ հավատք ունենալու համար:

Աստված զորացնում և բարձրացնում է ձեր հավատքը: Երբ դուք կերակրվում եք Նրա Խոսքով և վայելում եք այն, ձեր հավատքը կաճուցվում և ամրանում է: Հավատքը նման է ձեր ոտքի մկանին. առանց մարզման՝ այն կհյուծվի և անգործածական կդառնա: Ձեր հոգու *հավատքի* և *համոզվածության* մկանները նույնպես պետք է մարզվեն: Աստված լայն հնարավորություններ է տալիս ձեզ՝ մարզվելու համար, քանի որ ցանկանում է, որ դուք ուժեղ և լավ սպառազինված լինեք ձեր ընթացքի համար:

Առա՛ջ գնացեք Աստծո մեջ

Շարժվե՛ք առաջ, ոչ թե ետ: Դուք երբեք չեք հասնի ձեր նպատակին, եթե առաջ շարժվեք, իսկ հետո կրկին ետ գնաք: Միգուցե լսել եք այս հին ասացվածքը. «Երեք քայլ առաջ և երկու քայլ ետ»: Եթե այդպես ապրեք, դուք միշտ կշարժվեք, բայց երբեք ոչ մի տեղ չեք հասնի: Առաջ և ետ, առաջ և ետ՝ դուք միշտ շարժման մեջ կլինեք, բայց, փաստորեն, ոչ մի տեղ չեք հասնի:

Աստված կանչում է ձեզ առաջ՝ Իր մեջ: Աստված կանչում է ձեզ դուրս այնտեղից, որտեղ գտնվում եք՝ դեպի Իր խոստման երկիրը: Աստված պատվիրում է ձեզ դուրս գալ և մուտք գործել Իր մեջ և հայտնաբերել Իր ծրագիրը ձեր կյանքի համար: Նա կպատվիրի ձեզ ետ գնալ, միայն՝ եթե դուք պետք է ապաշխարեք և փոխեք ձեր ուղղությունը: Լսե՛ք Նրա ձայնը և գնացե՛ք այնտեղ, որտեղ Նա պատվիրում է ձեզ:

Աստված երբեք չի փոխվի մեզ համար. Նա կփոխի մեզ, որպեսզի գործածի Իր նպատակների համար: Դրական երևակայությունը նշանակում է, որ մենք փոխում ենք մեր մտածելակերպը և գործելակերպը: Այնուամենայնիվ, այս փոփոխությունը պետք է լինի ավելին, քան հասարակ մտավոր համաձայնությունը. այն պետք է ազդի մեր վարվելակերպի վրա: Փոփոխությունը չի կարող փոփոխություն համարվել, քանի դեռ դուք չեք փոխվել: Դուք կփոխվեք այն ժամանակ, երբ նույնը մնալը խիստ անհարմարավետ դառնա ձեզ համար: Երբ ձեր բնավորությունը սկսի դժվարություններ պատճառել ձեզ, դուք կփոխվեք:

Դուք պետք է գերեք ամեն մի միտք՝ հնազանդեցնելով Քրիստոսին (տե՛ս Բ Կորնթ. 10.5): Միայն այդ դեպքում կստանաք խոստացված հաղթանակը: Հենց սա է նշանակում՝ առաջ շարժվել Աստծո մեջ, վերցնել այն, ինչ Աստված տվել է ձեզ, և օգտա-

գործել դա Աստծո նախատեսված կերպով: Դուք կդառնաք այն, ինչի շուրջ շարունակ մտածում եք: Պահե՛ք ձեզ Աստծո մտքերի մեջ: Պահե՛ք ձեզ Մեծ Դրական Սպասման մթնոլորտում: Խոստանում եմ՝ երբ այդպես վարվեք, ձեր կյանքը կփոխվի:

Աստված ձեր հույսն է

«Եվ հույսի Աստված լցնի ձեզ ամեն ուրախությամբ և խաղաղությամբ՝ հավատալու մեջ, որ հույսով ավելանաք Սուրբ Հոգու զորությամբ» (Հռոմեացիների 15.13): Աստված լցնում է ձեզ Սուրբ Հոգով և ձևավորում է ձեր մեջ հետևյալ հատկանիշները.

- Հույս՝ ավելի լավ կյանքի համար:
- Զորություն՝ լավագույնին հավատալու համար:
- Ուժ և վստահություն ձեր առօրյա կյանքում:

Աստված պատրաստում է ձեզ ոչ թե ձախողման համար, այլ՝ հաջողության: Աստված ուզում է, որ Իր զավակը՝ դուք, լինեք լավագույնը ձեր բոլոր գործերում: Նա տալիս է ձեզ այն հույսը և վստահությունը, որոնց կարիքը դուք ունեք, որպեսզի ամեն ինչ անեք միայն լավագույն ձևով: Ձեր տրամադրության տակ է Երկնքի զորությունը, և դուք այն գործածելու թույլտվություն ունեք: Ձեր կյանքի աղբյուրը ոչ թե պակասությունն է, այլ՝ առատությունը: Աստված տվե՛լ է ձեզ այս ամենը:

Աստված տալիս է ձեզ զորություն՝ առատություն ունենալու համար: Նա խոստանում է առատություն, ոչ թե պակասություն: Աստված խոստանում է լրացնել ձեր բոլոր կարիքները, ոչ թե՝ ընդամենը մի քանիսը: Առատություն նշանակում է՝ ավելին, քան բավական է: Աստված խոստանում է ձեզ ավելին, քան բավական է, որպեսզի կատարեք այն, ինչ Նա որոշել է ձեզ համար:

Դուք ունեք առատություն, ոչ թե պակասություն: Սա Աստծո խոստումն է ձեզ:

Քանի որ ձեր կյանքում առատություն կա, ձեզնից հավատք է բխում: Երբ դուք ճնշվում եք մարդկանցից, ձեզնից հավատք է դուրս գալիս, ինչպես ատամի մածուկը՝ պարկուճից: Դուք հաղթող եք, ոչ թե զոհ: Դուք ցույց եք տալիս մարդկանց, թե ինչպես հաղթել: Դուք հայտնում եք Աստծո զորությունը ձեր հաղթական կյանքով:

Գործի՛ դրեք Խոսքը

Մնացե՛ք Սուրբ գրքերի մեջ, և դուք ձեռք կբերեք անհրաժեշտ սպառազինություն, որպեսզի ետ մղեք այս աշխարհի բացասական ազդեցության հարձակումները: Հավատքը գալիս է լսելուց, իսկ լսելը՝ Աստծո Խոսքից: Մնացե՛ք Խոսքի մեջ: Եթե ձեր կյանքում չկա ուրախություն, խաղաղություն և հավատք, պատճառն այն է, որ դուք չեք սպասում, որ Աստված լցնի ձեզ դրանցով: Աստված տվել է ձեզ այն ամենը, ինչ անհրաժեշտ է հաջողակ կյանքի համար: Եթե ձեր ներսում լինի Աստծո Խոսքը՝ կենդանացված Աստծո Հոգով, դուք անպարտելի կլինեք: Աստված կհոգա այդ մասին:

Հավատքի քա՛յլ արեք, հավատացե՛ք Աստծո Խոսքին, և դուք հաջողության կհասնեք:

Գլուխ Երրորդ

ԵՐԵԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՈՒԺԸ

Այն հարցին, թե ինչն է ամենադժվարը սար բարձրանալու մեջ, լեռնագնացը պատասխանեց. «Ես պատկերացնում եմ, թե ուր կտանի ինձ ամեն մի հերթական քայլը: Ես տեսնում եմ այդ քայլերն իմ մտքում և անում եմ դրանք իմ երևակայության մեջ: Այս «մտավոր փորձը» երաշխավորում է իմ հաջողությունը: Ես երբեք սար չեմ բարձրանում, քանի դեռ չեմ արել դա իմ մտքում:

Ես շատ վաղուց սովորել եմ, որ սար բարձրանալու ամենադժվար մասը՝ իմ մտքում դա անելն է: Ես պատկերացնում եմ ամենակտրուկ լանջերը և տեսնում եմ, որ մագլցում եմ դրանցով: Ես պատկերացնում եմ ամենադժվարին ծերպերը և տեսնում եմ, որ անցնում եմ դրանք: Ես տեսնում եմ իմ մտքում ուղղահայաց բարձունքները և այն, թե ինչպես եմ հաղթահարում դրանք: Սար բարձրանալու ամենադժվար մասը՝ իմ մտքում դա անելն է. այնպես որ, ամենաբարդ աշխատանքը, որը ես կատարում եմ, նույնպես իմ մտքում է:

Նույնը վերաբերում է բոլոր դժվարություններին, որոնց ես բախվում եմ կյանքում: Ես տեսնում եմ դրանք իմ երևակայութ-

յան մեջ, և երևակայությանս մեջ հաղթահարում եմ դրանք: Սա դժվարությունը հաղթահարելու ամենակարևոր մասն է»:

Երևակայություն. Աստծո պարգևը՝ մարդու մտքին

Մարդկանց մեծ մասը չի գիտակցում, թե որքան կարևոր է երևակայությունը: Ձեզ ուժեղ երևակայություն է տրվել՝ Աստծո նպատակներն իրագործելու համար: Եթե դուք երևակայություն չունենայիք, դուք կսահմանափակեիք Աստծուն և կխափանեիք Նրա տեսիլքը ձեր կյանքում: Առանց երևակայության ձեր աշխարհը դժգույն և պաղ կլիներ, որովհետև առանց տեսիլքի դուք կկործանվեիք:

Երևակայելու հնարավորությունը մեր ներսում՝ գործիք է, որը նախատեսված է այս կյանքի խոչընդոտները հաղթահարելու համար: Դուք կարող եք պատկերացնել ձեր դժվարությունը, ինչպես որ լեռնագնացը պատկերացնում է սար բարձրանալը, և տեսնել, թե ինչպես եք հաղթահարում այն: Շատերը սահմանափակել են իրենց երևակայությունը կա՛մ իրենց իսկ որոշմամբ, կա՛մ այնպիսի դաստիարակության պատճառով, որը նշանակություն չի տվել երևակայությանը:

Դուք պետք է հաղթահարեք այն խոչընդոտները, որոնք սահմանափակում են ձեր երևակայությունը: «Աստծո հետ ժամանակ վատնելը» ողջունելի է: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ է Աստվածաշունչը պատվիրում մեզ մտորել Աստծո Խոսքի շուրջ (տե՛ս Սաղմ. 77.12): Քանի որ դա օգնում է կառուցել ձեր երևակայությունը: Մեր երևակայությունն աստվածահաճո է դառնում, միայն՝ երբ մենք մտորում ենք Աստծո Անձի և Նրա զարմանալի գործերի շուրջ: Անբարո երևակայությունը՝ մեղք է, բայց եթե կենտրոնացնեք ձեր միտքն Աստծո վրա, ձեր երևակայությունը կնորոգվի՝ ձեր մտքի հետ միասին (տե՛ս Հռոմ. 12.1,2):

Աստծո ամենաթանկ պարգևներից մեկը՝ երևակայելու կարողությունն է: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ Հիսուսն ասաց աշակերտներին, որ նրանք պետք է դառնան փոքրիկ երեխաների պես՝ Աստծո թագավորությունը ժառանգելու համար: Պատճառն այն է, որ երեխաները կարող են երևակայել Աստծո զարմանալի իրողություններին մասին: Նրանք մտովի իրենց տեսնում են Աստծո Խոսքի լույսի ներքո և երևակայում են, որ հրաշալի կյանք ունեն Հիսուսի հետ:

Մեծանալով՝ մարդիկ կորցնում են երևակայելու կարողությունը, քանի որ կարծում են, որ դա ժամանակի կորուստ է: Ձեզ ասել են. «Գործի՛ր: Հերի՛ք է ժամանակ վատնես երազելու վրա»: Երազանքները կարող են պտղաբեր կամ մեղսալի լինել՝ կախված այն բանից, թե ինչի վրա են կենտրոնացած: Այնուամենայնիվ, երբ ձեր մտքում Աստծո երազանքներն են, դա ոչ թե ժամանակի կորուստ է, այլ արդյունավետ ժամանակ՝ նվիրված մտորումներին և խորհրդածություններին:

Աստծո զորությունը՝ ձեր ներսում

Աստծո զորությունը ձեր ներսում է: Նույն Հոգին, Ով հարություն տվեց Հիսուսին մեռելներից, ապրում է ձեզանում: Աստծո Սուրբ Հոգին ձեր մեջ է: Նրա զորությունը տրված է ձեզ, որպեսզի հաջողակ և բարգավաճ կյանք ունենաք: Հիսուսը եկավ, որ տա ձեզ կյանք՝ ավելցուկով. *«Գողը չի գալիս, բայց միայն որ գողանա և սպանի և կորցնի. Ես եկա, որ կյանք ունենան, և է՛լ ավելի ունենան»* (Հովհաննես 10.10): Դուք կսկսեք ապրել «է՛լ ավելիով», երբ հասկանաք, որ այդ կյանքը պատկանում է ձեզ: Այն ձե՛րն է: Երկնքի Թագավորը տալիս է ձեզ կյանք և ավելին. ԸՆԴՈՒՆԵ՛Ք ԱՅՆ:

Երբ ստանում եք այն, ինչ Աստված պատրաստել է ձեզ համար, դուք ձեռք եք բերում զորություն՝ գործելու համար (տե՛ս Ղուկ. 19.11-27): Աստծո Խոսքը պատվիրում է ձեզ գործածել ձեր պարգև-

ները և շահել ավելին, մինչև որ Հիսուսը գա: Ինչպե՞ս կարող եք անել դա, եթե չստանաք ի վերուստ տրվող զորությունը: Աշակերտները պատվեր ստացան՝ սպասել, մինչև որ զորություն ընդունեին: Նույնը վերաբերում է ձեզ: Երբ Աստծո զորությունը լցվում է ձեր ներսը և պատում է ձեզ դրսից, դուք ստանում եք այն ամենը, ինչ անհրաժեշտ է, որպեսզի կատարեք ձեր աստվածային կոչումը:

Աստծուց տրված զորությունն անում է ավելին, քան դուք կարող եք խնդրել կամ մտածել. *«Բայց Նրան, որ կարող է առատությամբ անել ամեն բաներից ավելի, քան որ խնդրում ենք և իմանում, այն զորության չափով, որ մեզանում ներգործում է...»* (Եփեսացիների 3.20): Դուք չեք կարող որևէ նշանակալի բան անել Աստծո համար միայն ձեր ուժերով, բայց Քրիստոսում ամեն ինչ հնարավոր է:

«Արդ եթե դուք, որ չար եք, գիտեք բարի պարգևներ տալ ձեր որդիներին, էլ որքա՞ն ավելի երկնային Հայրը Սուրբ Հոգին կտա նրանց, որ ուզում են Նրանից» (Ղուկաս 11.13): Դուք նկատեցի՞ք, որ այս խոստումը՝ Սուրբ Հոգու պարգևն էր: Ձեր Հայրը ցանկանում է տալ ձեզ լավագույն պարգևը, որը կօգնի ձեզ ապրել Իր մեջ: Նա խոստացել է ձեզ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ:

Գնացե՛ք ամբողջ աշխարհով

Հիսուսը պատվիրեց ձեզ գնալ ամբողջ աշխարհով և քարոզել Ավետարանը: Միգուցե հարցնեք. «Ինչպե՞ս անեմ դա: Ես հասարակ մարդ եմ»: Դուք կարող եք մեծ բաներ իրագործել՝

- Քարոզելով Ավետարանը այն մարդկանց, որոնց հետ շփվում եք:
- Քարոզելով Ավետարանը ձեր բնակավայրի կորած մարդկանց:
- Ազդեցություն թողնելով ձեր գործի մեջ կամ ձեր աշխատավայրում:

- Հարգանքով վերաբերվելով մարդկանց մթերային խանութում, հագուստի խանութում, բանկում կամ լվացքատանը:
- Ամենուր պատմելով Քրիստոսի Ավետարանը:

Այս աշխարհը ձեր շուրջն է: Ուր էլ գնաք, դուք այս աշխարհում եք: Մարդիկ ամենուր խնդրում են Աստծո ողորմությունը: Դուք պարզապես պետք է լարեք ձեր ականջները, որ լսեք: Հիսուսի ամենախորը խոսքերից մեկն Աստվածաշնչում հետևյալն է. «Ով որ ականջ ունի, թող լսի»: Դուք ունե՞ք ականջ՝ լսելու համար: Դուք ուզո՞ւմ եք շահել այս աշխարհն Աստծո համար: Ինչի՞ համար է Աստված կանչում ձեզ:

Ձեր երևակայությունը կարևոր դեր է կատարում ձեր ամբողջ ծառայողական կյանքում: Ես իմ մտքում երևակայում էի, որ քարոզում էի մարդկանց մեծ բազմությունների, մինչև որ սկսեցի անել դա: Եվ երբ ժամանակը եկավ, պատրաստ էի դրան: Ես բարձրանում էի ամբիոնի մոտ և քարոզում էի մարդկանց, և ծնկներս վախից չէին կպնում իրար՝ խանգարելով ինձ խոսել: Ես տեսա և լսեցի դա, նախքան դա տեղի ունեցավ: Դա օգնեց ինձ վստահություն և ուժ ձեռք բերել իմ ընթացքի համար:

Երևակայությունը՝ մտքի ուժն է: Այն ձևավորում է պատկերներ, գաղափարներ և չափանիշներ: Դուք տեսնում եք այն, ինչը պատրաստված է ձեզ համար, ոչ թե արտաքին աշխարհում, այլ՝ ձեր ներսում: Այն, ինչ պատրաստված է ձեզ համար, ձեր ներսում է: Դուք կտեսնեք դա ոչ թե ձեր տեսողությամբ, այլ՝ ներըմբռնողությամբ:

Ձեր վերաբերմունքը որոշում է ձեր ձեռքբերումները

Ձեր վերաբերմունքը որոշում է, թե որքանով դուք կբարձրանաք կամ անկում կապրեք: Ո՞րն է ձեր նպատակը՝ սավառնե՞լը է, թե՞ սողալը: Ձեր վերաբերմունքը մեծ կապ ունի ձեր ապագայի

հետ: Եթե պարտվողի վերաբերմունք ունենաք, դուք պարտություններ կկրեք, եթե հաղթողի վերաբերմունք ունենաք, դուք հաղթանակներ կտանեք. դո՛ւք եք ընտրում դա:

Ձեր վարքը որոշվում է ձեր վերաբերմունքով: Ձեր կեցվածքը և դիրքը որոշվում են ձեր վերաբերմունքով: Այն տեղը, որը դուք զբաղեցնում եք հասարակության մեջ, անմիջական կապ ունի ձեր մտքի դիրքորոշման հետ: Դուք ուզում եք լինել բարձրո՞ւմ, թե՞ ցածրում:

Դուք երբևէ նկատե՞լ եք, որ ոմանք պարզապես ուզում են, որ խղճաք իրենց: Նրանց կյանքը լցված է ինքնախղճահարությամբ և ափսոսանքով: Նրանք պարտված և եսակենտրոն վերաբերմունք ունեն: Ընկճվածությունը՝ եսասիրության վատագույն դրսևորումն է: Ձեր բոլոր մտքերը կենտրոնանում են այն բանի վրա, թե որքան խեղճ եք դուք, և թե ինչպես են մարդիկ հասցրել ձեզ այդ վիճակին: Ես ուզում եմ ասել հետևյալը. «Սիրելի՛ս, քո վերաբերմունքը որոշում է քո ձեռքբերումները»:

Փնտրե՛ք Աստծուն աղոթքով: Հիսուսն ասաց, որ դուք կարող եք Իրենից խնդրել՝ ինչ ուզեք, և Ինքը կպատասխանի ձեզ. *«Աստծո հավա՛տքն ունեցեք: Որովհետև ճշմարիտ ասում եմ ձեզ, թե ով որ այս սարին ասի՝ վե՛ր կաց և ծովն ընկի՛ր, և իր սրտում չերկմտի, բայց հավատա, թե ինչ որ ասում է, կլինի նրան, կլինի՝ ինչ որ ասի»* (Մարկոս 11.22բ,23): Հիսուսը հենց այնպես չտվեց ձեզ այս խոստումը: Նա չի ուզում, որ ձեր կյանքում պարտություններ լինեն:

Հիսուսը փնտրում և գտնում է այնպիսի մարդկանց, ովքեր նայելով նեղությանը՝ կասեն. «Ահա՛ ես, ուղարկի՛ր ինձ»: Արդյո՞ք դուք այդ մարդկանցից մեկն եք: Դուք խոստում ունե՞ք, որ հաղթելու եք, եթե պարզապես քայլ անեք և պայքարեք:

Ներբնակվող զորություն

Ձեր մեջ ներբնակվող զորություն կա: Աստված ավանդել է ձեզանում Սուրբ Հոգուն, և այդ պատճառով հիմա դուք շատ ավելին եք, քան՝ երբ առանց Քրիստոսի էիք: Եթե հիմնեք ձեր հավատքը և երևակայությունը ձեզ շրջապատող աշխարհի վրա, դուք կզիջեք ձեր դիրքերը և կնահանջեք: Այնուամենայնիվ, եթե հիմնեք ձեր հավատքը և երևակայությունը Աստծո Սուրբ Հոգու վրա, Ով բնակվում է ձեր ներսում, դուք կզորանաք և հաջողություններ կունենաք:

Աստծո ներբնակվող զորությունը տալիս է ձեզ ուժ, կարողություն և դիմացկունություն: Երբ բախվում եք դժվարությունների, ձեզանում հավատք և հաղթելու վճռականություն է ձևավորվում: Հավատքը ձևավորվում է կյանքի դժվարին պահերին: Հավատքը նման է պայթուցիկ նյութի. այն պայթեցնում է հին կյանքը ձեր մեջ, որպեսզի Աստված կառուցի նորը: *«Որովհետև Նրա ստեղծածն ենք՝ Քրիստոս Հիսուսով հաստատված բարի գործերի համար, որոնց համար Աստված սկզբից պատրաստեց մեզ, որ նրանցում վարվենք»* (Եփեսացիների 2.10): Այն ուժը, որն անհրաժեշտ է ձեզ, արդեն ձեր ներսում է:

Աստված լայն մտածելու կարողություն է տվել ձեզ: Նա որևէ կերպով չի սահմանափակել ձեր միտքը, որպեսզի չունենաք նեղ և բացասական մտքեր: Ձեր մտքի սահմանափակումները, այսինքն՝ նեղ և բացասական մտածելակերպը, գալիս են մեկ աղբյուրից՝ ձեր պարտություններից: Սատանան ուզում է պահել ձեր կյանքը մշտական պարտության մեջ: Նա ուզում է սանձել ձեզ, նախքան դուք ինչ-որ բան կանեք:

Աստված ցանկանում է հաղթանակ տալ ձեզ: *«Եվ դու, որդյա՛կ իմ, Սողոմո՛ն, ճանաչի՛ր քո հոր Աստծուն և ծառայի՛ր Նրան*

կատարյալ սրտով և հոժար կամքով, որովհետև Տերը քննում է բոլոր սրտերը և գիտի խորհուրդների ամբողջ միտքը: Եթե Նրան որոնես, Նա կգտնվի քեզնից, իսկ եթե Նրան թողնես, Նա էլ քեզ կթողնի հավիտյան» (Ա Մնացորդաց 28.9): Դուք ծառայում եք Աստծուն՝ ելնելով ձեր ցանկությունից և սիրուց: Տերը գիտի ձեզ, ձեր սիրտը և ձեր երևակայությունը: Աստծուն փնտրելը մշտապես արդյունք է տալիս՝ ձեզանում ներբնակվող զորության շնորհիվ: Եթե փնտրեք Աստծուն, դուք երբեք չեք մնա առանց մխիթարության և առանց ուսուցչի:

Երևակայություն և զորություն

Երևակայությունը՝ զորության աղբյուր է: Աստվածաշնչյան պատմությունը Նեբրովթի և Բաբելոնի աշտարակի մասին հաստատում է այս պնդումը:

> *«Եվ ամբողջ երկիրը մեկ լեզու և մեկ խոսվածք էր: Եվ եղավ, երբ որ նրանք արևելքից չվեցին, Սենաար երկրում մի դաշտ գտան և այնտեղ բնակվեցին: Եվ իրար ասացին. «Եկե՛ք աղյուսներ շինենք և կրակով այրենք»: Եվ աղյուսները նրանց համար քարի տեղ եղան, և կուպրը նրանց համար եղավ ցեխի տեղ: Եվ ասացին. «Եկե՛ք մեզ համար մի քաղաք շինենք և մի աշտարակ, և նրա գլուխը մինչև երկինքը լինի, և մեզ համար անուն ստանանք, որպեսզի չցրվենք ամբողջ երկրի երեսի վրա»:*
>
> *Եվ Եհովան իջավ մարդկանց որդիների շինած քաղաքը և աշտարակը տեսնելու: Եվ Եհովան ասաց. «Ահա մեկ ազգ է և մեկ լեզու նրանց ամենի համար, և ահա սկսեցին շինել: Եվ հիմա նրանց համար դժվար չի լինի՝ ինչ որ խորհեցին շինելու: Եկե՛ք իջնենք և այնտեղ նրանց լեզուն խառնակենք, որ իրար լեզու չհասկանան»: Եվ Եհովան այնտեղից*

նրանց ցրեց ամբողջ երկրի երեսի վրա, և քաղաքը շինելուց դադարեցին: Այդ պատճառով նրա անունը Բաբելոն կոչվեց, որովհետև Եհովան այնտեղ խառնակեց ամբողջ երկրի լեզուն: Եվ Եհովան նրանց ցրեց այն տեղից ամբողջ երկրի երեսի վրա» (Ծննդոց 11.1-9):

Մարդիկ որոշեցին մի աշտարակ կառուցել՝ մինչև երկինքը: Այս պատմությունն ավելի հետաքրքրական է դարձնում այն փաստը, որ շնորհիվ նրանց միաբանության՝ նրանց համար անհնարին ոչինչ չկար (խոսք 6): Ամենաազդեցիկ աղոթքն Աստվածաշնչում՝ միաբանության աղոթքն է. *«Դարձյալ ասում եմ ձեզ՝ եթե ձեզնից երկուսը երկրի վրա միաբանվեն, այն, ինչ բանի համար, որ խնդրեն, կլինի նրանց Իմ Հորից, որ Երկնքում է»* (Մատթեոս 18.29): Այս սկզբունքը դեռ ուժի մեջ է: Ձեր միաբանության աղոթքը հեռացնում է ձեր երևակայության սահմանափակումները և թույլ է տալիս Աստծուն գործել ձեզ համար:

Զորություն՝ հավատալու համար

Սուրբ Հոգին զորություն է տալիս ձեզ՝ հավատալու համար: Շնորհիվ Սուրբ Հոգու կենսատու զորության՝ դուք կարողանում եք լայն մտածել և հավատալ անհավատալի բաների: Այս ճշմարտությունը կարելի է տեսնել մի աստվածաշնչյան պատմության մեջ:

Մարկոս 9.14-29-ը՝ պատմություն է մի մարդու և նրա որդու մասին: Նրա որդին բռնված էր դևով, որի պատճառով նա համր էր դարձել և ընկնավորության նոպաներ էր ունենում: Հայրը բերեց իր որդուն աշակերտների մոտ, բայց նրանք չկարողացան հանել այդ դևին: Չցանկանալով հանձնվել՝ այդ մարդը մոտեցավ Հիսուսին և խնդրեց, որ օգնի: Հետաքրքիր է նշել, թե ինչպես նա խնդրեց Հիսուսին օգնել իրեն: Նա ասաց. «Եթե կարող ես, օգ-

նի՛ր մեզ»: Հիսուսը պատասխանեց. «Եթե կարո՞ղ եմ: Ամեն բան կարելի է հավատացողին»: Եվ այդ մարդն ասաց. «Հավատո՛ւմ եմ, օգնի՛ր իմ անհավատությանը» (տե՛ս խոսք 24):

Այդ տղայի հայրը հասկացավ, որ ինքն իրենով չէր կարող հավատալ մեծ բաների: Նա գիտեր, որ Հիսուսը պետք է օգներ իրեն՝ հաղթահարելու իր անհավատությունը, որպեսզի նա օրհնություն ստանար իր որդու համար: Հիսուսը լրացրեց այդ բացը, և այդ մարդու որդին լիովին բժշկվեց:

Հիսուսն այդ մարդու մեջ ավանդեց զորություն՝ հավատալու համար: Նա կավանդի նույն զորությունը ձեր մեջ, եթե թույլ տաք Նրան: Հենց հիմա բացե՛ք ձեր սիրտը և միտքը, որպեսզի ստանաք այն, ինչ Հիսուսը պատրաստել է ձեզ համար: Դուք չեք հուսախաբվի:

Գլուխ Չորրորդ

ԳՈՐԾԱԴՐԵ՛Ք ՁԵՐ ԵՐԵԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՁԵ՛Զ ՀԱՄԱՐ

Աստվածային երևակայություն ունեցող լեռնագնացը հիշում է. «Իմ մտքում այդ սարը բարձրանալիս ես տեսա այն, ինչին բախվելու էի վերելքի ընթացքում: Ես տեսա բոլոր թաքնված վտանգները և հաղթահարեցի դրանք: Ոչինչ չի կարող կանգնել այդ սարի գագաթի և իմ միջև: Ես հաջողությա՛ն կհասնեմ:

Ես երբեք չեմ փորձում սար բարձրանալ առանց՝ սկզբում անելով ամեն մի քայլն իմ մտքում, ո՛չ էլ տանում եմ ինձ հետ այնպիսի մարդկանց, ովքեր չեն հասկանում իրենց մտքի կարևորությունը: Հաջողությունը և ձախողումը կախված են ճիշտ վերաբերմունքից և մտավոր համաձայնությունից: Պայքարն ընթանում է մտքում: Եվ հենց այդտեղ է այն պսակվում հաղթանակով»:

Արարչագործությունը՝ Աստծո երևակայության իրականացումը

Դուք ստեղծված եք Աստծո նմանությամբ. *«Եվ Աստված ասաց. «Մեր պատկերով և Մեր նմանության պես մարդ շինենք,*

որ իշխի ծովի ձկների և երկնքի թռչունների և անասունների և ամբողջ երկրի վրա և երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա»: Եվ Աստված ստեղծեց մարդուն՝ Իր պատկերով. Աստծո պատկերով ստեղծեց նրան. արու և էգ ստեղծեց նրանց» (Ծնունդոց 1.26,27): Քանի որ դուք ստեղծված եք Աստծո պատկերով և նմանությամբ, դուք կարող եք ակնկալել, որ ինչ-որ առումով նման եք Նրան: Դուք Աստված չեք, բայց ունեք Նրա հատկանիշներից մի քանիսը:

Օրինակ՝ միգուցե դուք ստեղծագործական հակում ունեք դեպի գեղանկարչությունը կամ քանդակագործությունը: Միգուցե դուք ունեք երգահանի, գրողի կամ բանաստեղծի տաղանդ: Ստեղծարարությունը կարող է դրսևորվել ձեր կյանքում բազմաթիվ ձևերով, որոնք հատուկ են միայն ձեզ: Ստեղծարարությունը՝ Աստծո հատկանիշներից մեկն է:

Աստծո մեկ այլ հատկանիշը, որը մարդ արարածի բաղկացուցիչ մասն է կազմում՝ ընտանիքի անդամ լինելն է: Սիրելը և սիրվելը կարևոր է մարդկանց համար, քանի որ դա ի ծնե մեր էության մասն է: Աստված սեր է, և սերը Նրա էության անբաժանելի մասն է: Աստված նույնպես հաղորդակցվող էակ է. Նա ցանկանում է շրջապատված լինել Իր զավակներով: Դուք նրանցից մեկն եք, և Աստված ցանկանում է, որ մոտ լինեք Իրեն:

Կարևոր է՝ հասկանաք, որ Աստված է ստեղծել ձեզ: Դուք պատահականություն չեք, ո՛չ էլ առաջացել եք միլիարդավոր տարիներ առաջ տեղի ունեցած քիմիական ռեակցիայից, որի արդյունքում ինչ-որ ամինաթթու կազմվեց: Դուք հրաշալի արարած եք, որին ստեղծել է Աստված: Սաղմոս 139.14-16-ում գրված է. *«Գոհանում եմ Քեզնից, որ ահավոր և զարմանալի կերպով ստեղծվեցի: Զարմանալի են Քո գործերը, և իմ անձը լավ հասկացել է: Իմ ոսկորները չծածկվեցին Քեզնից, երբ որ ես ստեղծ-*

վեցի ծածուկ տեղը, և երկրի խորություններում ճարտարությամբ կազմվեցի: Քո աչքերը տեսան իմ կերպարանքը՝ դեռ անպատրաստ, և Քո գրքում գրված էին այն բոլոր օրերը, որ լինելու էին, երբ որ նրանցից մեկը դեռ չկար»:

Աստված փչեց ձեր մեջ կյանքի շունչը. *«Եվ Եհովա Աստված հողի փոշուց շինեց մարդուն և նրա ռունգերի մեջ կենդանության շունչ փչեց, և մարդը կենդանի հոգի եղավ»* (Ծննդոց 2.7): Դուք պատահականություն չեք: Դրական սպասում ունենալու համար դուք պետք է հասկանաք, թե ով եք և ում եք պատկանում: Դուք Աստծո հատուկ ստեղծագործություն եք և պատկանում եք Նրան: Քանի որ Աստված է ստեղծել ձեզ, Նա իրավունքներ ունի ձեր կյանքում: Ձեր ընթացքը Նրա ձեռքում է, և Նա կհետևի, որ դուք՝ Նրա ստեղծագործության թագավորական նրբագիծը, հաջողության հասնեք: Աստված ծրագիր ունի ձեզ համար, որը չի կարող ձախողվել: Դուք կարող եք ակնկալել, որ Աստված կհամագործակցի ձեզ հետ և կիրագործի այն ձեր կյանքում:

Իրագործե՛ք ձեր երազանքները

Դուք պետք է իրականացնեք ձեր երազանքները, ոչ թե պարզապես ապրեք դրանցով: Ձեր երազանքներն իրականանում են, երբ դուք ձգտում եք դրանց՝ Աստծո օգնությամբ: Այն երազանքները, որոնք չեն իրականանում, ընդամենը պատրանքներ են՝ գոլորշիներ, որոնք քշվում են ձեր մտքի քամիներով:

Դուք չեք ձևավորում ձեր երազանքները. ձեր երազանքներն են ձևավորում ձեզ: Որքա՞ն մեծ կարող է լինել ձեր երազանքը: Որքա՞ն լայնորեն դուք կարող եք մտածել: Ինչպիսի՞ խորություններ ունեցող, կամ՝ որքա՞ն հարուստ դուք կարող եք տեսնել ինքներդ ձեզ: Ի՞նչ սահմանափակումներ ունեն ձեր երազանքները:

Թշնամին տանել չի կարողանում, երբ այս ուղերձը քարոզվում է ինչ-որ մեկին՝ ինչ-որ երկրում: Այս ուսմունքն ապազինում է նրան և ռումբեր է նետում նրա բանակի վրա՝ Սուրբ Հոգու ռումբեր, որոնք պայթում են ուղիղ նրա երեսին: Նա գիտի, որ երբ ձեր երևակայությունը գործում է ամբողջ ուժով՝ նման ամբողջ արագությամբ սլացող գնացքի, դուք սպառազինված և պատրաստ եք: Աստվածային սպասումը՝ աստվածային երևակայության հետ մեկտեղ, անկարելի է կանգնեցնել:

Ձեր վերաբերմունքը կօգնի ձեզ կենտրոնանալ Աստծո վրա և ծառայել Նրան՝ կատարելով այն ամենը, ինչ Աստված որոշել է ձեզ համար: *«Ոչ իբր արդեն բռնած լինեմ, կամ թե արդեն կատարյալ եղած լինեմ, բայց հետևում եմ, որ իցե թե հասնեմ Նրան, ինչպես որ էլ հենց Քրիստոս Հիսուսից բռնված եմ: Եղբայրնե՛ր, ես իմ անձը չեմ համարում, որ հասած լինեմ, բայց մեկ բան կա. ետևի բաները մոռանալով՝ դեպի առաջի լինողներն եմ նկրտում: Հետևում եմ դեպի նպատակը՝ Աստծո վերին կոչման մրցանակին Քրիստոս Հիսուսում»* (Փիլիպեցիների 3.12-14): Աստված կօգնի իրականացնել ձեր երազանքները:

Հինգ բանալի՝ ուժեղ երևակայություն զարգացնելու համար

Առաջին բանալին.
Ձեր վերաբերմունքը որոշում է ձեր մոտեցումը կյանքին

«Բարի մարդն իր սրտի բարի գանձից բարի է բխում, և չար մարդն իր սրտի չար գանձից չար է բխում, որովհետև սրտի ավելացածից խոսում է նրա բերանը» (Ղուկաս 6.45): Դուք այն եք, ինչ մտածում եք, և դուք անում եք այն, ինչ խոսում եք: Վաղ թե ուշ ձեր խոսքերը կմատնեն ձեզ, և ճշմարտությունն այն մա-

սին, թե ինչպիսի մոտեցում ունեք կյանքի հանդեպ, կբացահայտվի: Դուք հավատո՞ւմ եք այն խոսքերին, որոնք դավանում եք:

«Որովհետև ճշմարիտ ասում եմ ձեզ, թե ով որ այս սարին ասի՝ վե՛ր կաց և ծովն ընկի՛ր, և իր սրտում չերկմտի, բայց հավատա, թե ինչ որ ասում է, կլինի նրան, կլինի՝ ինչ որ ասի: Սրա համար ասում եմ ձեզ, թե ամեն ինչ, որ աղոթք անելով խնդրեք, հավատացե՛ք, թե կառնեք, և կլինի ձեզ» (Մարկոս 11.23,24): Ինչպե՞ս եք դուք աղոթում: Հավատո՞ւմ եք, որ Աստված կպատասխանի ձեր աղոթքներին և կկատարի այն, ինչ խնդրում եք: Վստահե՛ք Աստծուն. Նա երբեք հուսախաբ չի անի ձեզ:

«...խորհուրդներ ենք քանդում, և ամեն բարձրություն, որ գոռոզանում է Աստծո գիտության դեմ, և գերի ենք բռնում ամեն միտք՝ Քրիստոսին հնազանդեցնելու համար» (Բ Կորնթացիների 10.4բ,5): Ամեն մի միտք գերելը՝ այս ուսմունքի ամենաազդեցիկ սկզբունքներից մեկն է, որը դուք պետք է հասկանաք: Դուք պետք է ձեր մտքի տերը լինեք: Եթե չվերահսկեք ձեր միտքը, ա՛յն կվերահսկի ձեզ: Աստված կաշխատի ձեզ հետ, որ սովորեք վերահսկել ձեր մտավոր կյանքը: Փնտրե՛ք Նրան ձեր մտքով:

Երկրորդ բանալին.
Ձեր վերաբերմունքը որոշում է ձեզ շրջապատող մթնոլորտը

«Եվ իմ Աստված լրացնի ձեր ամեն կարոտությունն Իր հարստության չափով՝ փառքով, Քրիստոս Հիսուսում» (Փիլիպեցիների 4.19): Դուք հավատո՞ւմ եք, որ Աստված կհոգա ձեր բոլոր կարիքները: Եթե ասում եք, որ հավատում եք Աստվածաշնչին, բայց չեք հավատում այս խոսքին, դուք կեղծավոր եք, և պետք է ապաշխարեք: Աստված ուզում է, որ հավատաք լավագույնին, որը Նա առաջարկում է ձեզ, և ստանաք այն:

Երբ դուք երկրպագում եք, տվե՛ք Աստծուն ձեր լավագույնը: Աստված տվեց մեզ Իր լավագույնը՝ ի դեմս Հիսուսի կյանքի և զոհի: Այդ դեպքում, ինչպե՞ս մենք կարող ենք տալ Նրան այնպիսի բան, ինչը պակաս է մեր լավագույնից: Երկրպագե՛ք Աստծուն հոգով և ճշմարտությամբ, և կտեսնեք, որ ձեր կյանքը կփոխվի: Երկրպագե՛ք Աստծուն դրական սրտով և տեսեք, որ Աստծո զորավոր ձեռքը կգործի ձեզ համար:

Երրորդ բանալին.
Ձեր վերաբերմունքը որոշում է ձեր հարաբերություններն այլ մարդկանց հետ

«Այն, ինչ որ կամենում եք, թե ձեզ անեն մարդիկ, այնպես էլ դուք արեք նրանց, որովհետև այս է օրենքը և մարգարեները» (Մատթեոս 7.12): Ինչպե՞ս եք ուզում, որ մարդիկ վերաբերվեն ձեզ: Դուք ուզո՞ւմ եք հարգանք և պատիվ ստանալ մարդկանցից: Այդ դեպքում, հարգանքով և պատվով վերաբերվեք նրանց: Դուք ուզո՞ւմ եք բարձր գնահատանք ստանալ մարդկանցից: Այդ դեպքում, բարձր գնահատեք նրանց:

«Հիսուսն էլ ասաց նրան. «Սիրի՛ր քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ անձով և քո ամբողջ մտքով: Սա է առաջին և մեծ պատվիրանը: Երկրորդն էլ՝ սրա նման՝ սիրի՛ր քո ընկերոջը քո անձի պես: Այս երկու պատվիրանից կախված են ամբողջ օրենքը և մարգարեները»» (Մատթեոս 22.37-39): Դուք սիրո՞ւմ եք մարդկանց այնպես, ինչպես որ ուզում եք սիրված լինել: Սա սկսվում է ընտանիքից: Ամուսիննե՛ր, դուք սիրո՞ւմ եք ձեր կնոջը այնպես, ինչպես որ ուզում եք սիրված լինել: Կանա՛յք, դուք հարգո՞ւմ եք ձեր ամուսնուն այնպես, ինչպես որ ուզում եք հարգանք ստանալ:

- Նախագահ Թեոդոր Ռուզվելտն ասել է. «Հաջողության հասնելու ամենակարևոր բաղադրիչը՝ մարդկանց հետ հարաբերություններ կառուցելու կարողությունն է»:

- Ջ. Փոլ Գեթթին, ով հայտնի ամերիկյան գործարար էր, ասել է. «Եթե նա (գործադիր տնօրենը) չի կարողանում արդյունքների հասնել՝ օգտագործելով մարդկանց, նա անպետք է՝ որպես գործադիր տնօրեն»:

Այս մարդիկ հասկացան, որ հաջողության հասնելու ամենակարևոր բաղադրիչը՝ մարդկանց հետ պատշաճ կերպով հարաբերություններ կառուցելն է: Այս սկզբունքը ճշմարիտ է կյանքի բոլոր բնագավառներում: Դուք չեք կարող շրջանցել այն:

Չորրորդ բանալին.
Ձեր վերաբերմունքից և երևակայությունից կախված է ձեր հաջողությունը կամ ձախողումը

«Այսուհետև, եղբայրնե՛ր, ինչ որ ճշմարիտ է, ինչ որ պարկեշտ, ինչ որ արդար, ինչ որ սուրբ, ինչ որ սիրուն, ինչ որ բարի անուն, թե՛ առաքինություն է, և թե՛ գովություն է, այն մտածեք» (Փիլիպեցիների 4.8): Մտածե՛ք դրական բաների մասին: Հեռո՛ւ պահեք ձեր միտքը հուսահատության ջրհորդանից և բնակեցրե՛ք այն Աստծո գահի սրահում: Այսօր ամբողջ աշխարհում առանց այդ էլ չափից շատ բացասական երևույթներ կան. դրակա՛ն եղեք, և ձեր կյանքը կփոխվի:

Երկու վաճառքի գործակալի ուղարկել էին մի արևադարձային կղզի: Երկուսն էլ կոշիկ էին վաճառում և գոհ էին իրենց աշխատանքի արդյունքներից: Նրանցից մեկը, տեսնելով, որ բոլոր մարդիկ բոբիկ են, եզրակացրեց, որ նրանք չեն ցանկանում կոշիկ հագնել: Նա հեռագիր ուղարկեց իր ընկերության գլխավոր

գրասենյակ՝ հաղորդելով, որ չարժե մեծ սպասումներ ունենալ մինչև երկրորդ կամ երրորդ տարին, քանի որ նա դեռ պետք է սովորեցներ նրանց կոշիկ կրել:

Մյուս վաճառքի գործակալն այլ բան տեսավ: Նա հեռագիր ուղարկեց իր ընկերության գլխավոր գրասենյակ՝ հաղորդելով, որ իրեն մեծ հնարավորություն էր ընձեռվել այդ կղզում: Քանի որ ոչ ոք կոշիկ չուներ, նրանց կոշի՛կ էր պետք:

Այս երկու վաճառքի գործակալները պատկերում են այն երկընտրանքը, որին բախվում է ամեն մի առաջնորդ: Մարդիկ տեսնում են բացասական կողմը, ոչ թե դրականը: Նրանք տեսնում են բոլոր «փաստերը» և չեն նկատում հնարավորությունները: Աղոթե՛ք, որ Աստված տա ձեզ աչքեր՝ ձեր շուրջը գտնվող հնարավորությունները տեսնելու համար:

Հինգերորդ բանալին.
Անհագ կերպով սնվե՛ք Աստծո Խոսքով. այն կփոխի ձեր մտքերը

Դուք կարող եք վերահսկել ձեր մտքերը, եթե պահեք Աստծո Խոսքը ձեզանում: Շփվե՛ք դրական մարդկանց հետ, և նրանք կօգնեն ձեզ՝ տեսնել հնարավորություններ, ոչ թե խնդիրներ (ի դեպ՝ այս երկուսը նույնն են. դրանք պարզապես տարբեր անվանումներ ունեն): Պողոսը և Շիղան բանտում էին և գիշերվա կեսին ամբողջ ձայնով փառաբանում էին Աստծուն: Փոխարենը նայեին փաստերին՝ նրանք տեսան, որ ամբողջ գիշեր Աստծուն անարգել փառաբանելու հնարավորություն ունեին:

«Սիրելի՛, ամենից առավել ցանկանում եմ, որ դու բարգավաճես և առողջ լինես, ինչպես որ քո անձն է բարգավաճում» (Գ Հովհաննես 2, NKJV): Աստված ցանկանում է, որ ձեր անձը բար-

գավաճի: Նա հոգ է տանում ձեզ համար և թույլ չի տա, որ դուք ձախողվեք: Նա հաղթող է անվանել ձեզ և տվել է այն ամենը, ինչ անհրաժեշտ է ձեզ՝ հաղթելու համար:

Անհագ կերպով սնվե՛ք Աստծո Խոսքով և թույլ տվեք Աստծուն՝ ցանել Իր Խոսքը խորը ձեր սրտում: Այն առատ պտուղ կտա և մեծ հունձք կբերի: Վայելե՛ք Խոսքը, և ձեր միտքը կլցվի ՄԵԾ դրական սպասումով՝ մեծ աստվածային սպասումով:

Դուք կարող եք անել այն, ինչի համար Աստված կանչել է ձեզ: Թե՛ Նա, թե՛ դուք, չունեք սահմաններ, և Սուրբ Հոգին կնքում է ձեր համագործակցությունը: Հավատքով քա՛յլ արեք: Հավատացե՛ք, որ Աստված կանի այն, ինչ ասել է: Հավաստիացնում եմ ձեզ՝ դուք չեք հուսախաբվի: Ի՞նչ է քրիստոնեական կյանքը: Քրիստոնեական կյանքը՝ զորության, վստահության, ուրախության, աստվածային սպասման և հավատքի մարմնավորումն է: Քրիստոնեական կյանքը կարելի է ամփոփել որպես հաջողություն, խոչընդոտների հաղթահարում և բավականություն: Ձեր ներսում կա զորություն՝ երևակայելու համար. այդ զորությունը Սուրբ Հոգուց է, Ով բնակվում է ձեր սրտի տաճարում:

Հիշե՛ք. Քրիստոս Հիսուսում վախ չկա: Նա կերաշխավորի ձեր հաջողությունը և կզորացնի ձեզ՝ ձեր ընթացքն անցնելու համար: Գնացե՛ք: Գործե՛ք: Լիարժեք կերպով օգտագործե՛ք ձեր ներուժը Քրիստոսում:

Այժմ դուք լեռնագնաց եք: Մագլցե՛ք դեպի ամենաբարձր սպասման մակարդակը, որը Աստված մոտեցրել է ձեզ: Հասանելի՛ եղեք Նրա համար, և դուք կգերազանցեք ձեր կարողությունները: Թո՛ւյլ տվեք Քրիստոսին գործածել և զորացնել ձեզ, որպեսզի լիարժեք օգտագործեք ձեր ներուժը:

ՌԱՍԵԼ ԵՎ ԲԱՐԲԱՐԱ ՊԼԻԼԱՐ

Հովիվ Ռասել Պլիլարն Աստծո Խոսքի հոյակապ ուսուցիչ է: Ռասելի հուղերձները՝ ուղղված իր տեղական եկեղեցուն և ամբողջ աշխարհին, բերում են բարենորոգում, հույս և վերականգնում Քրիստոսի մարմնին, և փոխում են այն մարդկանց կյանքերը, ում նա ծառայում է:

Հովիվ Ռասելը ցանկանում է, որ մարդկանց կյանքերը փոխվեն: Այդ ցանկությունը դրդել է նրան ավելի հեռուն գնալ իր տեղական եկեղեցական համայնքից՝ դեպի ազգերը, որտեղ Աստված դռներ է բացել, որոնք ոչ մի մարդ չի կարող փակել: Նա ծառայում է մի շարք երկրներում, որոնց թվում են Ավստրալիան, Չինաստանը, Հնդկաստանը, Ինդոնեզիան, Նոր Զելանդիան, Ռուսաստանը և մի շարք երկրներ Եվրոպայում և Սկանդինավիայում:

Հովիվ Ռասը սովորեցրեց ինձ հեռացնել այն սահմանափակումները, որոնցով ես թույլ չէի տալիս Աստծուն գործել իմ կյանքում: Իմ նոր սպասման մակարդակն աշխատանքային առաջխաղացում տվեց ինձ: Վերջերս ես աշխատանքի ընդունվեցի որպես տնօրեն մի խոշոր հեռահաղորդակցական ընկերությունում: – Լ.Կ.

Բարբարա Պլիլարն ամուսնու հետ հովվական ծառայության մեջ է Կալիֆոռնիա նահանգի Սան Դիեգո քաղաքի «Ցանք և Հունձք» եկեղեցում: Հովիվ Բարբարան կրակով լցված է եղել Տիրոջ համար սկսած 1979 թվականից, երբ Աստծո բժշկարար զորությունը հպվեց նրան: Նա ուժգին հավատք ունեցող կին է, ով հրաժարվում է փոխզիջման ենթարկել Աստծո Խոսքի ճշմարտությունը: Բարբարայի նպատակն է՝ Աստծո Խոսքի ճշմարտությամբ հասնել իր տեղական եկեղեցուն և ազգերին:

Բարբարան հայտնի է որպես Աստծո Խոսքի ազդեցիկ ծառայող: Նրա խիզախ ծառայության միջոցով շատերը ազատագրվել են կապանքներից, ընկճվածությունից, աղքատությունից, հիվանդությունից և ամեն տեսակի դիվային ազդեցությունից: Նրա քարոզները քանդում են հոգևոր ամրությունները և մարդկային ավանդույթները, որոնք անարդյունավետ են դարձնում Աստծո Խոսքը:

Բարբարան հաճախ է ծառայում կանանց համաժողովներում թե՛ ԱՄՆ-ում, թե՛ աշխարհի տարբեր երկրներում: Նա և ամուսինը քարոզել են մի քանի խոշոր ավետարանչական հավաքույթների ընթացքում: Նրանք ծառայում են մի շարք երկրներում, որոնց թվում են Ավստրալիան, Չինաստանը, Հնդկաստանը, Ինդոնեզիան, Նոր Զելանդիան, Ռուսաստանը և մի շարք երկրներ Եվրոպայում և Սկանդինավիայում:

ՌԱՍԵԼԻՆ ԿԱՄ ԲԱՐԲԱՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՀՐԱՎԵՐ ՈՒՂՂԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

Seedtime and Harvest Ministries
P.O. Box 270635, San Diego, CA 92198-2635
Հեռախոս՝ (858) 576-1622 ● Ֆաքս՝ (858) 576-7389
Բարբարայի էլ. հասցեն. bplilar@seedtime.org
Ռասելի էլ. հասցեն. rplilar@seedtime.org

Ես մեծ ուժ ստացա և խրախուսվեցի՝ կարդալով հովիվ Բարբարայի «Դուրս գալ փոսից» *գիրքը: Նրա վկայությունն այն մասին, որ Աստված բժշկեց նրան, երբ նա մերձիմահ էր, օգնեց ինձ նորովի հավատալ իմ աուտիզմով տառապող որդու համար:*

– Կ.Լ.

ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԵՎ ՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Ռասել և Բարբարա Պլիլարները տեսիլք ունեն ո՛չ միայն Սան Դիեգո քաղաքի իրենց տեղական եկեղեցու համար. նրանք նույնպես ծառայում են այլ երկրներում: Վերջերս, մի շարք այլ ծառայողների հետ, նրանք հինգ օր շարունակ քարոզում էին Ինդոնեզիայում՝ ավետարանչական հավաքույթներին: Ցերեկային հավաքույթների ընթացքում ավելի քան 4.000 մասնակիցների, հովիվների և առաջնորդների սովորեցնում էին Աստծո Խոսքը: Նրանք շարունակական հիմունքներով աջակցում և սովորեցնում են Աստծո Խոսքը Մեքսիկայի Բախա նահանգի մի քանի քաղաքներում: Նրանք ծառայել են մի քանի եվրոպական և սկանդինավյան երկրներում, ինչպես նաև՝ Ավստրալիայում, Չինաստանում, Հնդկաստանում և Նոր Զելանդիայում:

«Սեր» նախագիծը՝ Գոհության և Սուրբ ծննդյան տոների ժամանակ, Սան Դիեգոյում կերակրում է ավելի քան 1.000 մարդու:

ՌԱՍԵԼԻՆ ԿԱՄ ԲԱՐԲԱՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՀՐԱՎԵՐ ՈՒՂՂԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Seedtime and Harvest Ministries

P.O. Box 270635, San Diego, CA 92198-2635

Հեռախոս՝ (858) 576-1622 ● Ֆաքս՝ (858) 576-7389

Բարբարայի էլ. հասցեն. bplilar@seedtime.org

Ռասելի էլ. հասցեն. rplilar@seedtime.org

«ԹԱՐՄ ԿՐԱԿ» ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

«Թարմ կրակ» երաժշտական խումբը կանչված է հպվելու Աստծո ժողովրդին ազդեցիկ երաժշտությամբ: Այս խմբի նպատակն է՝ ազդարարել և հռչակել Հիսուսի անունը և հպվել մարդկանց՝ Աստծուն փառաբանելու միջոցով: «Թարմ կրակը» մշտապես ձգտում է նոր և խանդավառող երգեր ունենալ՝ Աստծո ժողովրդին ոգեշնչելու և Աստծուն օրհնելու համար:

ԽՄԲԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

ԼՈՒՍԱՎՈՐԵԼ

Կրթել երաժշտական ծառայության մեջ կանչված մարդկանց՝ կառուցելով նրանց մեջ հոգևոր հիմք՝ համաձայն Աստծո Խոսքի:

ՑՈՒՑԱԴՐԵԼ

Ցույց տալ, թե որքան կարևոր է երաժշտությունն Աստծո թագավորության մեջ:

ՓՈԽԱՆՑԵԼ

Հոգևոր ներդրում ունենալ ուսուցման, քարոզման և օրինակ լինելու միջոցով:

Եթե ցանկանում եք հրավիրել «Թարմ կրակ» փառաբանության խմբին՝ ծառայելու ձեր եկեղեցում կամ կազմակերպությունում, զանգահարե՛ք (858) 576-1622 հեռախոսահամարով:

ՈՒՂԱՐԿԵ՛Ք ՁԵՐ ԱՂՈԹՔԻ ԽՆԴՐԱՆՔՆԵՐԸ

Աստվածաշունչը պնդում է Մատթեոսի 18.18,19-ում, որ եթե երկու մարդ համաձայնեն Հիսուսի անունով, իրենց աղոթքը լսված կլինի:

ԱՆՈՒՆ _____

ՀԱՍՑԵ _____

ՔԱՂԱՔ _____ ՆԱՀԱՆԳ _____ ՓՈՍՏԱՅԻՆ ԿՈԴ _____

ՀԵՌԱԽՈՍ (_____) _____

ԷԼ. ՀԱՍՑԵ _____

Ուղարկե՛ք ինձ ավելի շատ տեղեկություն.

☐ «Ցանք և հունձք» եկեղեցի
☐ «Թարմ կրակ» երաժշտական ծառայություն
☐ «Կերակրել մարդկանց Սան Դիեգոյում» նախագիծ
☐ «Ճշմարտության եղջյուր» լրաթերթ
☐ «Ցանք և հունձք» միսիոներական ծառայություն

ԿՏՐԵ՛Ք ԵՎ ՈՒՂԱՐԿԵ՛Ք.
Seedtime and Harvest Ministries
P.O. Box 270635,
San Diego, CA 92198-2635

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

ԱՂՈԹՔԻ ԽՆԴՐԱՆՔՆԵՐ (ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)

Կյանքը լի է երևակայությամբ
Դուք կստանաք այն, ինչ սպասում եք

Սպասել՝ նշանակում է ակնկալել... Դուք ապրում եք՝ լավ բաների սպասելո՞վ: Ունե՞ք դրական ակնկալիք ձեր ապագայի վերաբերյալ: Մարդիկ սպասում են, որ լավ նվերներ կստանան Սուրբ Ծննդյան տոներին, բայց երբեմն մեր սպասվածի փոխարեն մեզ մի անհեթեթ փողկապ են նվիրում: Այնուամենայնիվ, մենք պետք է դրական սպասում ունենանք ամեն ինչում: Սպասումը նայում է առաջ՝ դեպի ապագան:

Հովիվ Ռաս Պլիլարի գիրքը ոչ միայն տեղեկացնում է, այլև ոգեշնչում, հորդորում և նորովի ցույց է տալիս, թե ինչպես մեր կյանքի բացասական երևույթները վերածել դրականի...

Երևակայությունը կազմում է երբևէ տեղի չունեցած կործանարար իրադարձություններ՝ զարհուրելի և սոսկալի պատկերներով, և կյանքի է կոչում այն, ինչից վախենում է: – *Հաննա Մուր*

Ոչինչ տեղի չի ունենում՝ նախքան երևակայության մեջ հայտնվելը: – *Կառլ Սենդբերգ*

Այս աշխարհում կատարված բոլոր գործերն սկիզբ են առնում երևակայության մեջ:

– Բարբարա Գրիզուտի Հարիսոն

Հասիր բարձունքների, որովհետև աստղերը թաքնված են քո ներսում: Խորաթափանց երազանքներ ունեցիր, որովհետև երազանքը միշտ նախորդում է նպատակին:

– *Պամելա Վոլլ Սթարր*

Որոշ թիմեր խաղում են մասնակցելու համար, բայց չեմպիոնները խաղում են հաղթելու ակնկալիքով: Կարդալով «Դրական երևակայության ուժը» գիրքը՝ դուք կստանաք բարձրագույն լիգայի մոտիվացիա, տեղեկություն և ոգեշնչում: Ռասել Պլիլարը գիտի, թե ինչ է ասում: Նա և կինը՝ Բարբարան, Աստծո առաջնորդությամբ կառուցել են «Ցանք և հունձք» անվանումով մի ժամանակակից և առաջադեմ եկեղեցի Կալիֆոռնիա նահանգի Սան Դիեգո քաղաքում: Թույլ տվեք Ռասին՝ առաջնորդել ձեզ դրական երևակայության ուժի և անձնական հաղթանակի ճանապարհով:

– *Վիլյամ Վ. Քրաուչ, «Վան Քրաուչ Քոմյունիքեյշնս»*

Սպասման մթնոլորտը՝ բերրի հող է հրաշքի համար: Հովիվ Ռաս Պլիլարի գիրքը՝ դրական երևակայության ուժի մասին, կնորոգի ձեր սպասումները:

– *Ռիկ Գոդվին, Ավագ հովիվ, «Արծվաբույն» եկեղեցի, Սան Անտոնիո, Տեխաս*



Հովիվ Ռասել Պլիլարն Աստծո Խոսքի հոյակապ ուսուցիչ է: Նրա ուղերձները՝ ուղղված իր տեղական եկեղեցուն և ամբողջ աշխարհին, բարեհորոգում, հույս և վերականգնում են բերում Քրիստոսի մարմնին և կյանքեր են փոխում: Նա ծառայում է Չինաստանում, Ռուսաստանում, Հնդկաստանում, Նոր Զելանդիայում նաև՝ մի շարք Եվրոպական և Սկանդինավյան երկրներում: Հովիվ Ռասելն ավարտել է «Ռեմա» Աստվածաշնչյան ուսումնական կենտրոնը:

Հրատարակված է «Ցանք և հունձք» ծառայության կողմից
www.seedtime.org